ԳԼՈԲՈՒՍ

Հրատարակվում է
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ աջակցությամբ

10 (89)

ԵՐԵՎԱՆ

2017

ԳԼՈԲՈՒՍ

Թիվ 10 (89), 2017

«ԳԼՈԲՈՒՍ» ՏԵՂԵԿԱԳՐԻ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Աշոտ Թավադյան
ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր

Աշոտ Թևիկյան
ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների և Ռուս-հայկական (սլավոնական) համալսարանի կառավարման ամբիոնների դասախոս, տ.գ.թ.

Գագիկ Հարությունյան (համակարգող)
«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն, ք.գ.թ.

Կարեն Վ.Կարապետյան
ՀՀ վարչապետ, տնտեսագիտության դոկտոր

Մուշեղ Լալայան
ՀՀԿ փոխնախագահ

Սամվել Մանուկյան
«Նորավանք» ԳԿՀ փոխտնօրեն, ս.գ.թ.

Վահագն Ագլյան
«Նորավանք» ԳԿՀ խորհրդական, ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Հանրային կառավարման ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ

Վարդան Հարությունյան
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահ, տ.գ.թ.

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր
Գագիկ Հարությունյան

Գլխավոր խմբագրի տեղակալներ
Սամվել Մանուկյան
Վահագն Ագլյան

Պատասխանատու խմբագիր
Խոնարհիկ Քարաուղլանյան

Պատասխանատու քարտուղար
Լուսինե Բաղրամյան

Խմբագիրներ
Արեստակես Սիմավորյան
Դիանա Գալստյան
Կարեն Վերանյան
Վահրամ Հովյան

Էջադրող-ձևավորող
Տաթևիկ Քարաուղլանյան

ԳԼՈԲՈՒՍ

Թիվ 10 (89), 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գագիկ Հարությունյան
Մեր ազգային շահը 5

Սամվել Մանուկյան, Դիանա Գալստյան, Լիլիթ Հակոբյան
Աշխարհի կերպարը Հայաստանի հեռուստատեսային լուրերում 11

Դիանա Գալստյան, Լիլիթ Հակոբյան
Լրատվական հաղորդումների համեմատական վերլուծություն 24

Վահրամ Հովյան
Սփյուռքի ինքնակազմակերպման հունական փորձից 34

Լուսինե Տանաջյան, Սոնա Ներսիսյան
Սփյուռքահայերի ներդրումային գործունեությունը Հայաստանում 41

Սյուզաննա Բարսեղյան
Սփյուռքի ներդրումները և սփյուռքահայ գործարարները
հայաստանյան առցանց ԶԼՄ-ում 45

Հայկ Գաբրիելյան
21-րդ դարը՝ «Քրդակա՞ն դար» 50

Իշխան Սոխակյան
Բրեթոն-Վուդսյան խորհրդաժողովի որոշ արդյունքների
համառոտ վերլուծություն 63

Հուշագիր հեղինակին 69

ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ՇԱՀԸ[1]

«Հայաստանի հարաբերությունները Եվրոպայի հետ պետք է զարգանան, առաջին հերթին, գիտատեխնոլոգիական կոնտենտի շեշտադրմամբ»,- հարցազրույցում ասաց «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի տնօրեն *Գագիկ Հարությունյանը*։

- Պարոն Հարությունյան, Հայաստանը դարձավ ԵԱՏՄ և ՀԱՊԿ առաջին երկիրը, որը շրջանակային համաձայնագիր ստորագրեց Եվրամիության հետ։ Ի՞նչ եք կարծում, սա զուտ թղթի վրա «նշում» արվելու համա՞ր էր (թեև բավական նշանակալի), որը կարելի է գրանցել մեր արտաքին քաղաքականության ակտիվում, թե՞ խոսքը պոտենցիալ գործուն համագործակցության մասին է։

- Իհարկե, ԵՄ-ի հետ համաձայնագրի ստորագրումը հատկանշական փաստ է Հայաստանի արտաքին քաղաքականությունում, և հարկ է պատշաճը մատուցել նրանց, ովքեր կարողացան իրագործել դա։ Ելնելով ստեղծված իրողություններից՝ բավականաչափ քաղաքական իմաստնություն, ճկունություն և համբերություն է պահանջվել, որպեսզի ԵՄ-ի հետ նման պայմանագիրն իրականություն դառնա։ Միևնույն ժամանակ, ակնհայտ է, որ խոսքը պարզապես թղթի մասին չէ, որի վրա բարի մտադրություններ են գրված։ Համաձայնագիրը մեզ որոշ առավելություններ է տալիս և, առաջին հերթին, որոշակի դիվանագիտական գերակշռություն Ղարաբաղի վերաբերյալ բանակցություններում։ Այսօր շատ է խոսվում այն մասին, որ ԵՄ-ի հետ համաձայնագրի ստորագրումը Հայաստանին հնարավորություն է ընձեռում դառնալ մի յուրատեսակ կամուրջ ԵԱՏՄ երկրների (և, մասնավորապես, Ռուսաստանի) ու Եվրամիության միջև. սա նույնպես շատ կարևոր շեշտադրում է։ Այսօր ԵՄ-ում փոփոխություններ են տեղի ունենում, և մենք տեսնում ենք, որ եվրոպական առաջնորդները երկխոսություն են փնտրում Ռուսաստանի հետ։

[1] http://www.golosarmenii.am/article/61208/nash-interes

- Նույնը կարելի է ասել նաև Ռուսաստանի մասին Եվրոպայի առնչությամբ...

- Իհարկե: Հիշենք բարձր մակարդակով բանակցությունները Չեխիայի նախագահի, հունգարացի գործընկերների հետ, որոշակի շարժ կա Ֆրանսիայի, Գերմանիայի և այլոց հետ Ռուսաստանի փոխհարաբերություններում: Նման միտումները հուսադրող են այն իմաստով, որ քաղաքական կամքի առկայության և հմտության պարագայում Հայաստանն իրոք կարող է դառնալ կապող օղակ ԵԱՏՄ-ի և ԵՄ-ի միջև: Ինչն, ի դեպ, նշվեց նաև «Միասնական Ռուսաստան» կուսակցության ներկայացուցիչների կողմից Հայաստան կատարած այցի ժամանակ: Նրանց կողմից նշվեց նաև, որ ԵՄ-ի հետ Հայաստանի համաձայնագիրը Ռուսաստանին որոշակի առավելություն է տալիս ոչ միայն քաղաքական, այլև տնտեսական առումով. մասնավորապես՝ երկու կողմից գործող տնտեսական պատժամիջոցների իրողությունների պարագայում Հայաստանի միջնորդությունը կարող է նպաստավոր դեր խաղալ: Միևնույն ժամանակ, կարևորելով, անշուշտ, քաղաքական և տնտեսական գործոնները, անձամբ ես կարծում եմ, որ մեր հարաբերությունները Եվրոպայի հետ պետք է զարգանան, առաջին հերթին, գիտատեխնոլոգիական կոնտենտի շեշտադրմամբ: Եվրոպան հայտնի է իր համալսարաններով, գիտական կենտրոններով, նրա բարեկեցությունն, ըստ էության, պայմանավորված է այդ համալսարանների, գիտելիքների, տեխնոլոգիաների առկայությամբ, որոնց կարիքն այսօր մենք շատ ունենք: Եվ եթե հաջողվի Եվրոպայի հետ գործընկերության շրջանակներում նաև գիտատեխնոլոգիական համագործակցություն հաստատել, դա, անշուշտ, օգտակար կլինի Հայաստանի համար:

- Իսկ ի՞նչ շահ ունի Եվրոպան Հայաստանի հետ կապված:

- Շատ կարևոր հարց է: Ակնհայտ է, որ ներկայիս Եվրոպան բնավ նման չէ այն Եվրոպային, որի հետ պատրաստվում էինք համաձայնագիր կնքել 2013-ին: Այսօրվա Եվրոպան միգրանտների հետ հարցերի պատճառով գտնվում է խոր էճգնաժամի մեջ, որն իր հերթին հանգեցնում է քաղաքական ուժերի շերտավորմանը ԵՄ-ում: Մենք դա տեսնում ենք Գերմանիայի, Ֆրանսիայի և այլոց օրինակով: Սաստկացել են կենտրո-

նախույս ուժերը, և դրա ցայտուն օրինակը Մեծ Բրիտանիայի դուրս գալն է ԵՄ կազմից (Բրեքսիթ)։ Փոխվել են նաև ԱՄՆ-ի հետ Եվրոպայի հարաբերությունները, այսպես ասենք՝ Թրամփի Ամերիկայի հետ։ Մենք կարող ենք փաստել, որ «միասնական Արևմուտք» հասկացությունն այսօր այլևս գոյություն չունի, և որ ԵՄ և անգլոսաքսոնական հանրության շահերն այսօր միշտ չէ, որ համընկնում են... Պատահական չէ, որ Թրամփի իշխանության գալը հաճախ անվանում են «Բրեքսիթ-2»։ Կարելի է փաստել նաև կենտրոնախույս միտումների առկայությունը հենց եվրոպական երկրների ներսում։ Դրա օրինակն են Կատալոնիան, Կորսիկան (որը նույնպես ցանկանում է ավելի շատ ինքնավարություն ստանալ) և Իտալիայի մի շարք նահանգները։ Բնական է, որ այս ամենը խարխլում է Եվրոպայի քաղաքական կամքը և խափանում նրա տնտեսական հնարավորությունները։ Եվ այս մասին ասում են իրենք՝ եվրոպացիները։ Ես վերջերս վերադարձա Ռոդոսի «Քաղաքակրթությունների երկխոսություն» միջազգային համաժողովից, որին մասնակցում էին եվրոպական պետությունների ղեկավարները, Եվրահանձնաժողովի բարձրաստիճան պաշտոնյաները, քաղաքական գործիչներ։ Եվ նրանք բոլորն էլ խոսում էին *հետլիբերալ* աշխարհի ու լիբերալ գաղափարախոսության ճգնաժամի մասին, որի իրականացնողն էր մայրցամաքային Եվրոպան անգլոսաքսերի հետ միասին։ Այդ ճգնաժամի ցայտուն դրսևորումն է իրավիճակը Մերձավոր Արևելքում, որտեղ լիբերալ գաղափարների բռնի ներդրումը քաղաքակրթական այլ կոդ ունեցող հասարակություններում հանգեցրեց ողբերգության, միլիոնավոր մարդկային զոհերի և միլիոնավոր փախստականների։ Այսօր արդեն հասկանալի է, որ հաջողության հասնում են այն երկրները, որոնք կարողանում են համատեղել տարբեր գաղափարախոսական հոսանքները։ Անշուշտ, ինչպես լիբերալիզմը, այնպես էլ սոցիալիզմը ունիվերսալ գաղափարախոսություններ են, սակայն դրանց մենաշնորհային արտահայտությունները, ինչպես ցույց տվեց ԽՍՀՄ օրինակը, իսկ ներկայում՝ արևմտյան երկրների սպառողական հասարակություններում իշխող ճգնաժամը, վկայում է այն մասին, որ մենատիրությունը գաղափարախոսական ոլորտում հանգեցնում է տո-

տալիտարիզմի (այսօր տեղեկատվական շրջանառության մեջ է մտել «տոտալիտար լիբերալիզմ» եզրը), ինչն էլ իր հերթին կարող է հանգեցնել ծանր հետևանքների ինչպես սեփական, այնպես էլ այլոց հասարակություններում: Թերևս, ակնհայտ է, որ օպտիմալ կառավարման համակարգը ենթադրում է լիբերալ և սոցիալիստական գաղափարախոսությունների համատեղում, և դրանց հետ միասին պետք է գործեն նաև պահպանողական մոտեցումները, որոնք բնորոշ են կոնկրետ հենց այդ հասարակությանը:

- Այսինքն՝ ազգային գաղափարախոսություն...

- Այո՛: Չինաստանում, օրինակ, կարողացան համատեղել այդ գաղափարախոսական տրիադան: Իսկ Եվրոպան ընկավ խոր ճգնաժամի մեջ՝ իր այդ բոլոր գենդերային ծրագրերով և օրենքներով, որոնք փորձում է պարտադրել ողջ աշխարհին, և որոնք, անտարակույս, կարելի է անվանել հակաքրիստոնեական: Եվ այդ օրենքներն «առաջ են մղվում» այդ թվում նաև Հայաստանում: Մինչդեռ, ակնհայտ է, որ գիտատեխնոլոգիական առաջընթացը կարող է տեղի ունենալ բացառապես հասարակությունում բարոյական հիմքերի առկայության պարագայում: Գերմանիայում մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմի սկիզբը ապրում էր ավելի քան 30 Նոբելյան մրցանակակիր, նացիստների իշխանության գալը լիովին փոխեց իրավիճակը: Գաղափարախոսության և գիտելիքների հակադրությունը հանգեցրեց ողբերգության, որի զոհ դարձան տասնյակ միլիոնավոր մարդիկ: Մոտավորապես նման մի բան է տեղի ունենում այսօր Եվրոպայի որդեգրած և մյուս երկրներում ագրեսիվորեն ներդրվող լիբերալ գաղափարախոսության համատեքստում: Մենք պետք է բոլորս հասկանանք սա՝ մեծ բարեկամության գնալով եվրոպացիների հետ: Այո, Եվրոպան հսկայական գիտական, մշակութային, տեխնոլոգիական ռեսուրս ունի, և մենք պետք է փորձենք վերցնել հենց այն, ինչը մեզ հարկավոր է: Եվ, մեր հերթին, կամուրջ ծառայել Եվրոպայում ավելի ռացիոնալ, կառուցողական գաղափարախոսական հասկացությունների ներդրման համար, որոնց կարիքը նա ակնհայտորեն ունի: Վերջերս ես կարդացի եվրոպացի ինտելեկտուալների, մտավորականների մի շատ հեղինակավոր խմբի հայտարարությունը, ովքեր գիտակցում են, որ Եվրոպան անդունդ է

գլորվում: Եվ նրանց մեջ ընդվզում է հասունանում այն բանի դեմ, ինչն այսօր կատարվում է Եվրոպայում, ընդվզում, որը շատ է հիշեցնում խորհրդային այլախոհների ելույթները կոմունիստական տոտալիտարիզմի դեմ:

- Իսկ Եվրոպայում այսօր նկատվո՞ւմ է լիբերալ, ավելի ճիշտ՝ հետլիբերալ ամբողջատիրություն:

- Դա փաստ է: Եվ հասկանալով իրավիճակը՝ մենք պետք է գործենք համապատասխան ձևով՝ ելնելով Հայաստանի և առհասարակ հայկական հանրության շահերից: ԵՄ-ի հետ պայմանագրի կնքումն իսկապես կարելի է համարել հայկական դիվանագիտության մեծ հաջողություն. զարմանալի չէ, որ Մոլդովայի նախագահը գալիս է այստեղ և խնդրում փորձով կիսվել: Եթե մենք կարողանանք Եվրոպայի հետ համագործակցությունից վերցնել այն ամենալավը, որը նա կարող է, մեր հերթին առաջարկելով կառուցողական գաղափարներ, ապա դա հիրավի արգասավոր բարեկամություն կլինի: Դա շահավետ է մեզ համար: Եվ Եվրոպայի ու Ռուսաստանի միջև առճակատման նվազման ձգտումը նույնպես համընկնում է մեր շահերի հետ...

- Իսկ ինչպե՞ս կմեկնաբանեք հակահայկական տրամադրությունները ռուսաստանյան տեղեկատվական դաշտում՝ վիրավորական հրապարակումներ, հեռուստահաղորդումներ, թոք-շոուներ, որոնք ուղեկցեցին ԵՄ-ի հետ մեր համաձայնագրի կնքմանը:

- Իհարկե, այդ փաստը ցավալի է: Ռուսաստանյան տեղեկատվական դաշտը, ցավոք, այնքան էլ անկողմնակալ չէ: Սակայն կարելի է բացատրել կատարվածի մեխանիզմը: Մեր հակառակորդները մեծ փողեր են ծախսում՝ ակտիվորեն «գնելով» մարդկանց և տեղեկատվական ինտերվենցիա կազմակերպելով Հայաստանի դեմ: Ի դեպ, դա բնորոշ է ոչ միայն այն համատեքստում, ինչը տեղի էր ունենում ռուսաստանյան ԶԼՄ-ում: Վերջերս ամերիկյան *Forbes*-ում տեղեկատվություն հայտնվեց, թե, իբր, ԱՄՆ-ում գործող հայկական հասարակական կազմակերպությունները՝ բոլորն անխտիր, Կրեմլի գործակալներն են Ամերիկայում: Ինչն ակնհայտ անհեթեթություն է: Բայց և միաժամանակ, հստակ նկատվում է ԱՄՆ հայերի և ամերիկյան հասարակության միջև սեպ խրելու ձգտումը, որտեղ

ուժեղ են հակառուսական տրամադրությունները: Ասել, թե ամերիկահայերը Կրեմլի գործակալներն են, նշանակում է՝ նրանց Ամերիկայի դավաճան հայտարարել: Մոտավորապես նման մի բան տեղի է ունենում նաև Ռուսաստանում, որտեղ հայերին մեղադրում են արևմտամետ տրամադրություններ ունենալու մեջ: Համոզված եմ, որ դա ադրբեջանական ծառայությունների աշխատանքն է տեղեկատվական պատերազմի հարթությունում: Ես համոզված եմ, որ ԱՄՆ-ում և ՌԴ-ում կատարված տեղեկատվական գործողությունները փոխկապակցված են, և այստեղ ակտիվ գործում են մեր հարևանները: Այ, մենք խոսում էինք Եվրոպայի մասին. սակայն հիշենք Եվրախորհրդարանի՝ Ադրբեջանից կաշառքներ ստացող պատգամավորներին: Ինչո՞վ են ռուսաստանյան լրատվամիջոցների որոշ ներկայացուցիչներ «ավելի վատը», քան «կոռուպցիայի դեմ գլոբալ պատերազմ» հայտարարած կաշառակեր եվրապատգամավորները: Միևնույն ժամանակ, մենք էլ պետք է շատ կշռադատված, մտածված գործենք: Գաղտնիք չէ, որ մեր տեղեկատվական տարածքն էլ է առատ հակառուսական նյութերով: Կարծում եմ, որ բոլոր դեպքերում չարժե չափազանցել նման հրապարակումների ազդեցությունն ինչպես մեկ, այնպես էլ մյուս կողմից: Ցանկացած նման դրսևորման պետք է ընտրովի մոտեցում ցուցաբերել և՝ առանց ավելորդ հույզերի: Ի դեպ, ռուսաստանյան լրատվամիջոցներում հակահայկական տրամադրությունների բռնկումից առանձնապես ոգևորվել էին նրանք, ովքեր այստեղ հակառուսական տրամադրություններ են հրահրում:

Զրուցեց Զարա Գևորգյանը

ԱՇԽԱՐՀԻ ԿԵՐՊԱՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ԼՈՒՐԵՐՈՒՄ

Սամվել Մանուկյան[*], *Դիանա Գալստյան*[**], *Լիլիթ Հակոբյան*[***]

Խնդիրը.- Հետազոտությունները ցույց են տվել, որ Հայաստանի 18+ հեռուստալսարանի 77.4%-ի համար 1-ին կամ 2-րդ առավել դիտվող ալիքներն են «Արմենիան», «Շանթը» և «Հ1»-ը: Երեկոյան 18:00-24:00-ը հեռուստացույց է դիտում Հայաստանի բնակչության 84%-ը: Իսկ հեռուստատեսային լուրերը՝ հեռուստահաղորդումների դիտման գերադասելիության տեսակետից, երկրորդ տեղում են սերիալներից հետո: Հետևաբար.

- **Հեռուստատեսային լուրերը շատ կարևոր դեր ունեն Հայաստանի հասարակության պատկերացումների կազմավորման հարցում՝ արդի աշխարհի, արդի Հայաստանի, աշխարհում Հայաստանի տեղի և դերի, ինչպես նաև համաշխարհային և հայաստանյան զարգացումների վերաբերյալ:**
- **Այլ կերպ՝ հեռուստատեսային լուրերը կազմավորում են «աշխարհի կերպարը» Հայաստանի հասարակության պատկերացումներում:**

Անբարենպաստ քաղաքական, տնտեսական և ռազմական կոնյունկտուրայի պայմաններում հասարակական ընկալումներում աշխարհի կերպարի անհամապատասխանությունն ազգային անվտանգության և ազգային զարգացման նպատակներին բարձրացնում է ազգային աղետի հավանականությունը:

Հետևաբար.

- **Աշխարհի կերպարը հասարակական գիտակցությունում հանդիսանում է կրիտիկական ենթակառուցվածք:**

---

[*] «Նորավանք» ԳԿՀ փոխտնօրեն, սոց.գ.թ.:

[**] «Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի ղեկավարի տեղակալ:

[***] «Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի փորձագետ:

Հոդվածում դիտարկել ենք այն հարցերը, թե աշխարհի ինչ կերպար է ձևավորում Հայաստանի հասարակությունում Հայաստանի հեռուստատեսային լրատվական ինֆորմացիոն դաշտը, և արդյոք այն համապատասխանում է Հայաստանի ազգային անվտանգության և ռազմավարական զարգացման նպատակներին:

Հետազոտության շրջանակը.- Ներկայացված են Հայաստանի երեք առավել դիտվող հեռուստաալիքների՝ «Արմենիայի», «Շանթի» և «Հ1»-ի, ինչպես նաև «Հ3» հեռուստաալիքի լուրերի հիմնական թողարկումների կոնտենտ վերլուծության արդյունքները: Առաջին երեք հեռուստաալիքները լրատվության 1-ին կամ 2-րդ աղբյուրն են Հայաստանի 18 և ավելի տարեկան հեռուստալսարանի 77.4%-ի համար: Հետևաբար, դրանք են հիմնականում կազմավորում Հայաստանի նշված հեռուստալսարանի «աշխարհի կերպարը»:

Հետազոտությունն իրականացվել է 2017թ. սեպտեմբերի 4-10-ը, «փրայմ թայմ»՝ 18:00-24:00 միջակայքում: Դիտարկվել են հետևյալ լրատվական հաղորդումները՝ «Օրակարգ» («Հ1», 21:00-21:35), «Ժամը» («Արմենիա», 20:00-20:50), «Հորիզոն», («Շանթ», 22:00-22:35) և «Օրը լրատվական» («Հ3», 21:30-22:00)[1]:

Հեռուստալուրերի ընդհանուր բնութագրերը.- *Աղյուսակ 1*-ում ներկայացված են դիտարկված հեռուստաալիքների լուրերի հիմնական թողարկման ժամանակային ծածկույթները: Աղյուսակը ցույց է տալիս, որ այդ հեռուստաալիքների հիմնական լրատվական հաղորդումները լուրեր են մատուցում հեռուստալսարանին 20:00-ից մինչև 22:35-ն անընդհատ: Հատկանշական է, որ.

- **Հայաստանի 3 առավել դիտվող հեռուստաալիքների լուրերի գլխավոր թողարկումների ժամանակային միջակայքերը չեն վերածածկվում (*Աղյուսակ* 1):**

[1] Կիրակի՝ սեպտեմբերի 17-ին, ուսումնասիրվել է միայն «Հ1»-ը: Սեպտեմբերի 18 և 19-ին՝ «Շանթի» լուրերի քանակը եղել է նշանակալիորեն ավելի քիչ, քան այլ օրերին:

Աղյուսակ 1



Լուրերը հեռարձակելիս հեռուստաալիքները հաղորդում են նաև անոնսներ և գովազդ: Անոնսները կազմել են բոլոր հեռուստաալիքների հեռարձակման միավորների 4.7%-ը և ժամանակի 5.8%-ը, իսկ գովազդը համապատասխանաբար՝ 5 և 0.8%-ը (*Աղյուսակ* 2): Ըստ ժամանակի ծավալի, անոնսները մոտավորապես հավասար հեռարձակել են «Շանթը» (անոնսների ամբողջ ժամանակային ծավալի 29.6%-ը), «Արմենիան» (27.6%), «Հ1»-ը (25.5%), համեմատաբար ավելի փոքր ծավալով՝ «Հ3»-ը (17.3%): Լուրերի միջև գովազդ հեռարձակել է միայն «Արմենիան»: *Լուրերն ուսումնասիրելիս անոնսները և գովազդը չեն հաշվառվել:*

Աղյուսակ 2

Ալիք	Ընդամենը հեռարձակված լուր 1 շաբաթում	Ընդամենը հեռարձակված լուր 1 շաբաթում, % քանակից	Ընդամենը, հեռարձակված լուր 1 շաբաթում, ժամ	Ընդամենը, հեռարձակված լուր 1 շաբաթում, %, ժամերից	Մեկ լուրի միջին տևողությունը[2]
Արմենիա	157	25.0%	3:57:17	28.3%	0:01:31
Հ1	172	27.4%	4:09:09	29.7%	0:01:27
Հ3	165	26.3%	2:25:03	17.3%	0:00:53
Շանթ	134	21.3%	3:27:33	24.7%	0:01:33
Ընդամենը	**628**	**100.0%**	**13:59:02**	**100.0%**	**0:01:31**

Աղյուսակի տվյալներից երևում է, որ.

- **Մեկ լուրի միջին տևողությունը 1 բոպե 31 վայրկյան է, որը համարյա նույնն է երեք «մեծ ալիքների» համար: «Հ3»-ի լուրի միջին տևողությունն է 53 վայրկյան:**

[2] Աղյուսակի տվյալները համակշռված են: Կիրառված են հետևյալ կշիռները. «Արմենիա»՝ 0.446, «Շանթ»՝ 0.418, «Հ1»՝ 0.134, «Հ3»՝ 0.002: Կշիռները ցույց են տալիս, որ «Հ3»-ն ըստ էության լուրերի կառուցվածքում որևէ նշանակություն չունի՝ նրա ազդեցությունը տասնորդական տոկոսի չափով է, և բոլոր աղյուսակներում «Ընդամենը» սյունն *ըստ էության* ներկայացնում է «Արմենիա», «Շանթ» և «Հ1» հեռուստաալիքների ընդհանուր համակշռված ցուցանիշը:

Աշխարհը, Հայաստանն ու Արցախը հեռուստալիքների լուրերում.- Հետազոտությամբ դիտարկվել է հեռուստատեսային լուրերի աշխարհագրությունը: *Աղյուսակ 3*-ում տրված է հեռուստատեսային լուրերի աշխարհագրությունը վեց ընդհանրացված կատեգորիաներում՝ 1. Հայաստանի Հանրապետություն (համահայաստանյան լուրեր), 2. Լուրեր Երևանի մասին, 3. Լուրեր Հայաստանի քաղաքների մասին, 4. Լուրեր Հայաստանի գյուղերի մասին, 5. Լուրեր Արցախի մասին և 6. Լուրեր «մնացած աշխարհի» մասին: Ստացվել է հետևյալ պատկերը:

- **Բոլոր հեռուստալիքների լուրերի ընդհանուր ժամանակի 37%-ը նվիրվել է Երևանին, 28%-ը՝ համահայաստանյան թեմաներին, 28%-ը՝ «մնացած աշխարհին», ընդամենը 4.7%-ը Հայաստանի մարզերին և ընդամենը 2.5%-ը՝ Արցախին:**
- **Ընդ որում՝ Հայաստանի քաղաքներին տրամադրվել է լուրերի հեռարձակման ժամերի 2.4%-ը, իսկ գյուղերին՝ 2.3%-ը:**

Եթե ենթադրենք, որ «արդարացի» կլիներ, եթե ժամերը Երևանի, Հայաստանի մնացած քաղաքների և Հայաստանի գյուղերի միջև բաշխվեին այդ բնակավայրերի բնակչության քանակի համամասնությամբ[3], ապա Երևանին պետք է տրամադրվեր ժամանակահատվածի 15.5%-ը, քաղաքներին՝ 11.7%-ը, իսկ գյուղերին՝ 14.6%-ը: Եթե որպես ժամանակի «արդարացի» բաշխման ցուցանիշ վերցնենք տնտեսության ծավալը, ապա Երևանին պետք է հատկացվեր ընդհանուր ժամանակի 13.8%-ը[4]: Եթե նույնիսկ Երևանին, որպես մայրաքաղաք, տրվեր ժամանակային «բոնուս», ապա ակնհայտ է, որ.

- **Լուրերի ժամանակահատվածի առկա բաշխումը հայաստանյան հեռուստալուրերի ինֆորմացիոն դաշտում ունակ չէ տալու հայաստանյան իրավիճակի ադեկվատ պատկերը:**

Նշենք, որ Հայաստանի քաղաքների և գյուղերի միջև բաշխված լրատվական ժամանակը շատ մոտ է վերը նշված «արդարության» սկզբունքին:

[3] Երևանում է բնակվում Հայաստանի բնակչության 37%-ը, քաղաքներում՝ 28%-ը, իսկ գյուղերում՝ 36%-ը:
[4] Երևանի մասնաբաժինը կազմում է Հայաստանի տնտեսության 33%-ը:

Աղյուսակ 3

Տարածաշրջան	Ընդամենը հեռարձակված լուր 1 շաբաթում, քանակ	Ընդամենը հեռարձակված լուր 1 շաբաթում, % բոլոր հեռուստաալիքների հեռարձակած լրատվական ժամերից
Աշխարհ	274	27.7%
ՀՀ	136	28.0%
Երևան	189	37.0%
ՀՀ մարզեր, այդ թվում՝	18	4.7%
ՀՀ քաղաքներ	*10*	*2.4%*
ՀՀ գյուղեր	*8*	*2.3%*
Արցախ	11	2.5%
Ընդամենը	**628**	**100.0%**

Նույն տվյալներն՝ ըստ դիտարկված հեռուստաալիքների, տրված են *Աղյուսակ 4*-ում:

Աղյուսակ 4

Տարածաշրջան	Ընդամենը հեռարձակված լուր 1 շաբաթում, % բոլոր հեռուստաալիքների հեռարձակած լրատվական ժամերից			
	«Արմենիա»	«Հ1»	«Հ3»	«Շանթ»
Աշխարհ	23.9%	19.6%	45.0%	29.7%
ՀՀ	29.6%	40.2%	13.4%	22.0%
Երևան	40.7%	29.2%	37.8%	41.8%
Մարզեր, այդ թվում՝	4.8%	5.5%	3.0%	4.9%
ՀՀ գյուղեր	*2.1%*	*2.1%*	*2.4%*	*2.7%*
ՀՀ քաղաքներ	*2.7%*	*3.4%*	*0.6%*	*2.2%*
Արցախ	1.1%	5.6%	0.9%	1.5%
Ընդամենը	**100.0%**	**100.0%**	**100.0%**	**100.0%**

Աղյուսակի տվյալներն արտապատկերում են դիտարկված հեռուստաալիքների լրատվական հաղորդումների առանձնահատկությունը: Տարածաշրջաններին տրամադրվող լրատվության ժամանակի բաշխման տեսակետից.

- **Միմյանց շատ նման են «Արմենիան» և «Շանթը»: Դրանցում նշանակալիորեն ավելի գերակա տարածաշրջան է Երևանը:**

- **«Հ1»-ի առանձնահատկությունն այն է, որ այստեղ նշանակալիորեն գերակա է համահայկական լրատվությունը (ինչը բնութագրում է այն որպես համահայկական ալիք), ինչպես նաև, մնացած ալիքների համեմատ, ավելի մեծ տեղ է տրվում Արցախի մասին լրատվությանը՝ 5.6% (ինչը նույնպես բնութագրում է այն որպես համահայկական ալիք), այն դեպքում, երբ մնացած ալիքներում Արցախին է տրամադրվում լրատվական ժամանակի 0.9-1.5%-ը:**
- **«Հ3»-ի առանձնահատկությունն է, որ այստեղ նշանակալիորեն ավելի գերակա է «մնացած աշխարհին» տրամադրվող լրատվական ժամանակը (40.2%), ի հաշիվ համահայկական լրատվության (13.4%):**

Աշխարհի երկրների և տարածաշրջանների ներկայացվածությունը լուրերում.- «Մնացած աշխարհին» տրամադրված լրատվական ժամանակի կազմում դիտարկվել է առանձին երկրներին տրամադրված ժամանակը: Դիտարկված հեռուստաալիքների «աշխարհագրական նախապատվությունները» տրված են *Աղյուսակ 5*-ում: Նույն աղյուսակում «Ընդամենը» սյունը համակշռված է այնպես, որպեսզի արտապատկերի դիտարկվող 4 հեռուստաալիքների լսարանների հարաբերակցությունը:

Ընդհանուր առմամբ, դիտարկված հեռուստաալիքների շրջանակում Հայաստանի հեռուստատեսային ինֆորմացիոն լրատվական դաշտում անվերապահորեն գերիշխում է ԱՄՆ-ի վերաբերյալ լրատվությունը, որը կազմում է «մնացած աշխարհի» մասին լրատվության 17.1%-ը: Նրան նշանակալիորեն զիջում են երկրորդ տեղում գտնվող Մեծ Բրիտանիան (8.1%), երրորդ տեղում՝ Ադրբեջանը (7.8%), չորրորդում՝ Ռուսաստանը (6.8%), հինգերորդում՝ Իսրայելը (6.5%) և վեցերորդում՝ Թուրքիան (6.0%):

Առանձին հեռուստաալիքների լրատվության կազմում նորից կազմավորվել է հեռուստաալիքների նմանության նույն պատկերը, ինչ «Աշխարհ – Համահայկական լուրեր – Երևան, ՀՀ քաղաքներ – ՀՀ գյուղեր - Արցախ» դասակարգման դեպքում:

- **«Արմենիայի» և «Շանթի» աշխարհագրական գերակայությունները բավական «նման են» միմյանց, և դրանցում առաջին տեղում է ԱՄՆ-ը, իսկ հետո՝ եվրոպական երկրները:**

«Արմենիայի» նախապատվություններն էին ԱՄՆ-ը («մնացած աշխարհին» տրամադրված ամբողջ ժամանակի 13.2%), Մեծ Բրիտանիան (11.3%), Իսրայելը (11.0%) և Իսպանիան[5] (9.6%), որոնց հաջորդում են ՌԴ-ն (8.3%) և Ֆրանսիան (8.3%):

«Շանթի» լուրերի աշխարհագրական նախապատվությունները դիտարկվող շաբաթվա ընթացքում եղել են ԱՄՆ-ը («մնացած աշխարհին» տրամադրված ամբողջ ժամանակի 22.6%-ը), Ադրբեջանը (13.1%), «Եվրոպան»՝ որպես միասնական տարածաշրջան (10,9%) և Ուկրաինան[6] (9.9%): «Շանթի» լրատվության կազմում Ռուսաստանի Դաշնությանը տրամադրվել է «աշխարհի մասին» լրատվության ընդամենը 1.5%-ը:

- **Հատկանշական է, որ «Արմենիայի» և «Շանթի» լրատվության շրջանակներում բացակայում էր Իրանը:**

«Հ1»-ի լրատվական հաղորդումներում աշխարհագրական գերակայությունների դիտարկումը հանգեցնում է եզրակացության, որ.

- **«Հ1»-ի լրատվական հաղորդումներում աշխարհագրական գերակայությունները լիովին համապատասխանում են Հայաստանի համար առավել ակտուալ «արտաքին աշխարհին»:**
- **«Հ1»-ի ուշադրության կենտրոնում է նախ և առաջ Հայաստանի ռազմական կարևորագույն (փաստորեն միակ) ռազմական դաշնակիցը՝ ՌԴ-ն:**
- **Երկրորդն է «ամենամեծ թշնամին»՝ Թուրքիան:**
- **Երրորդն է ԱՄՆ-ը՝ աշխարհի միակ գերտերությունը, որը որպես շատ հզոր գործոն ներկա է աշխարհի բոլոր կետերում, այդ թվում նաև Հայաստանում:**
- **Չորրորդը Սիրիան է՝ որտեղ դիտարկվող ժամանակահատվածում ընթացող պատերազմն ուղղակիորեն կապված էր Հայաստանի ազգային անվտանգության հետ և, բացի դրանից, վերաբերում էր հայկական Սփյուռքի կարևորագույն հատվածներից մեկին՝ սիրիահայությանը:**

[5] Իսպանիան ներկայացված է բացառապես ֆուտբոլային լուրերով:
[6] Դիտել Ուկրաինայի և Ռուսաստանի համեմատական երանգները:

- **Հինգերորդը Հայաստանի երկրորդ կարևորագույն դաշնակիցն է, որի նշանակությունը Հայաստանի համար և ամբողջ տարածաշրջանում ավելի ու ավելի է աճում՝ Իրանը:**

«Հ3»-ի լրատվությունն աշխարհի մասին առանձնանում է նրանով, որ այստեղ առկա են միայն երկու ակնհայտորեն գերակա երկրներ.

- **«Հ3»-ի նախապատվություններ էին Թուրքիան (19.1%) և ԱՄՆ-ը (17.0%), որոնց տրված ժամանակը մոտավորապես նույնն էր, և նշանակալիորեն գերազանցել են ցանկացած այլ երկրին տրված ժամանակին:**
- **«Հ3»-ի լրատվական ժամանակի միայն 4.8%-ն էր վերաբերում Ռուսաստանի Դաշնությանը և մոտավորապես հավասար էր Ուկրաինային տրամադրված ժամանակին:**

Աղյուսակ 5

Տարբ/Երկիր	Արևելք
ԱՄՆ	13.2%
ՄԲ	11.3%
Իսրայել	11.0%
Իրանիա	9.6%
ՌԴ	8.3%
Գերմանիա	8.3%
Թուրքիա	7.0%
Գերմանիա	4.4%
Վրաստան	3.9%
Արաբական	3.0%
Բելգիա	2.2%
Իսրայել	2.2%
Թուրքմենստան	2.2%
Ճապոնիա	1.9%
Բաուրաշ Կոլ.	1.0%
Այլ	9.9%
Ընդամենը	100.0%

Տարբ/Երկիր	Շանս
ԱՄՆ	22.6%
Արաբական	13.1%
Եվրոպա	10.9%
Ուկրաինա	9.9%
Վրաստան	7.0%
Իրաք	6.6%
ՄԲ	5.9%
Իսրայել	3.9%
Գերմանիա	3.0%
Հարավային Կորեա	2.7%
Թուրքիա	2.4%
Թուրքմենստան	1.8%
Ղազախստան	1.8%
Իսպանիա	1.5%
ՌԴ	1.5%
Այլ	5.4%
Ընդամենը	100.0%

Տարբ/Երկիր	Հ1
ՌԴ	18.3%
Թուրքիա	13.9%
ԱՄՆ	12.8%
Սիրիա	10.6%
Իրան	8.2%
Եվրոպա	7.4%
Արաբական	7.1%
Վրաստան	5.9%
ՄԲ	4.2%
Իսրայել	3.2%
Ֆրանսիա	2.9%
Թուրքմենստան	1.5%
Իսպանիա	1.4%
Բելգիա	0.8%
Հարավային Կորեա	0.8%
Այլ	1.0%
Ընդամենը	100.0%

Տարբ/Երկիր	Հ3
Թուրքիա	19.1%
ԱՄՆ	17.0%
ՌԴ	4.8%
ՄԲ	4.7%
Ուկրաինա	4.6%
Եվրոպա	4.5%
Արաբական	4.2%
Գերմանիա	3.6%
Վրաստան	3.2%
Իրաք	2.9%
Ռումինիա	2.9%
Սիրիա	2.9%
Ֆրանսիա	2.3%
Ադրբեջան	2.2%
Իսպանիա	2.0%
Այլ	18.9%
Ընդամենը	100.0%

Տարբ/Երկիր	Ընդամենը
ԱՄՆ	17.1%
ՄԲ	8.1%
Արաբական	7.8%
ՌԴ	6.8%
Իսրայել	6.5%
Թուրքիա	6.0%
Եվրոպա	5.6%
Վրաստան	5.5%
Իսպանիա	5.1%
Ուկրաինա	4.4%
Ֆրանսիա	4.2%
Գերմանիա	3.2%
Իրաք	2.8%
Թուրքմենստան	1.9%
Սիրիա	1.9%
Այլ	13.1%
Ընդամենը	100.0%

Աղյուսակ 5-ի տվյալների ընդհանրացումը (*Գծապատկեր 1*) տալիս է «Արտաքին աշխարհի» այն կերպարը, որը բովանդակությամբ է լցվում Հայաստանի հեռուստատեսային լրատվությամբ:

- **Հայաստանի հասարակության համար «Արտաքին աշխարհի» մոտ կեսը ներկայացնում է Արևմուտքը,** այդ թվում ԵՄ-ը՝ 30%, իսկ ԱՄՆ-ը՝ 17%:
- **Թշնամիները «լցնում» են «Արտաքին աշխարհի» 14%-ը,** այդ թվում՝ Թուրքիան՝ 6% և Ադրբեջանը՝ 8%:

- **«Դաշնակիցները» կազմում են դրա ևս 14%-ը,** այդ թվում Ռուսաստանը՝ միայն 7%-ը:
- **Իսկ «մնացած աշխարհը» կազմում է «Արտաքին աշխարհի» մոտ քառորդ մասը:**

Գծապատկեր 1



- **Ռազմավարական տեսակետից Հայաստանի հեռուստատեսային լրատվության նման շեղումը խիստ անբարենպաստ է:**
- **Հայաստանի հասարակությանը շատ քիչ տեղեկություններ է հաղորդվում ինչպես իր ֆիզիկական անվտանգությունն ապահովող ռազմավարական դաշնակցի՝ ՌԴ-ի, այնպես էլ իր այն հարևանների վերաբերյալ՝ Վրաստան և Իրան, որոնց շնորհիվ մեղմանում է Հայաստանի տնտեսական շրջափակման ազդեցությունը:**
- **Իսկ Իրանի դեպքում շատ քիչ է տեղեկատվությունը Հայաստանի այն ռազմավարական դաշնակցի մասին, ում անբացահայտ և չհրապարակվող աջակցությունն Արցախի հարցում Հայաստանի համար հույժ կարևոր է:**

Թեմաներ և ոլորտներ.- Հասարակական գիտակցության և կարծիքի ձևավորման տեսակետից կարևոր է նաև այն, թե ինչ թեմաներ են արծարծվում ինֆորմացիոն դաշտում: *Աղյուսակ 6*-ում ներկայացված են դիտարկված հեռուստաալիքներում արծարծված թեմաներին տրամադրված ժամանակի բաշխումներն ինչպես առանձին հեռուստաալիքներում, այնպես էլ համակշռված ընդհանուր ժամանակը:

Աղյուսակ 6

Թեմաներ	«Արմենիա»	«Շանթ»	«Հ1»	«Հ3»	**Ընդամենը**
Քաղաքական	13.8%	29.1%	13.4%	29.2%	20.1%
Տնտեսական	18.9%	13.5%	27.4%	6.8%	18.0%
Սոցիալական	14.8%	11.8%	14.9%	16.1%	14.3%
Սփյուռք	12.3%	9.8%	13.2%	3.1%	10.4%
Մշակութային	7.9%	4.4%	12.0%	18.2%	10.0%
Աղետներ	8.2%	8.1%	4.1%	8.3%	7.0%
Սպորտ	7.0%	0.9%	0.6%	11.8%	4.4%
Շոու բիզնեսի իրադարձություններ	4.3%	5.5%	4.2%	2.4%	4.2%
Եղանակ	2.7%	9.1%	0.1%	2.0%	3.4%
Գիտություն և տեխնոլոգիա	**3.6%**	**4.6%**	**2.8%**	**0.3%**	**3.1%**
Բնապահպանություն	3.6%	2.4%	2.8%	0.9%	2.6%
Ռազմական	2.7%	0.8%	4.5%	1.0%	2.5%
Ընդամենը	100.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%

Աղյուսակի հիմնական առանձնահատկություններն են.

- **Դիտարկված հեռուստաալիքներն ամենամեծ ժամանակը հատկացնում են քաղաքական և տնտեսական թեմաներով լուրերին, համապատասխանաբար՝ 20 և 18%: Դրանց հաջորդում են սոցիալական, սփյուռքի վերաբերյալ և մշակութային լուրերը: Այս հինգ թեմաները միասին կազմում են լուրերին տրամադրված ժամանակի 70%-ը:**
- **Նշանակալի տեղ է տրամադրվում աղետներին, պատահարներին, ահաբեկչությանը և քրեական լուրերին՝ 7%:**
- **Այս թեմաներին հաջորդում են սպորտը, շոու բիզնեսի իրադարձությունները, եղանակի տեսությունը: Իսկ այդ շարքն ավարտում են**

գիտության և տեխնոլոգիաների մասին լուրերը, որոնց տրամադրվում է ժամանակի ընդամենը 3.1%-ը:

- **Վերջին խմբում են բնապահպանական և ռազմական լուրերը:**

Առանձին հեռուստալիքների թեմատիկ գերակայությունների առանձնահատկություններից կարելի է նշել հետևյալը.

- Քաղաքական լուրերին նշանակալիորեն ավելի մեծ տեղ են հատկացնում «Շանթը» և «Հ3»-ը:
- Տնտեսական լուրերին՝ «Հ1»-ը և «Արմենիան», որը, սակայն, նշանակալիորեն զիջում է «Հ1»-ին:
- Սփյուռքի թեման համարյա չի արծարծվում «Հ3»-ում, սակայն դրա փոխարեն այստեղ ամենաբարձր ցուցանիշն է *մշակութային լուրերի* տեսակետից, որոնք զբաղեցնում են ժամանակի 18.2%-ը, այն դեպքում, երբ «Շանթում» և «Արմենիայում» մշակութային թեմային տրամադրվող ժամանակը կազմում է լուրերի համապատասխանաբար՝ 4.4 և 7.9%-ը:

Եզրակացություններ.- Հայաստանի հեռուստատեսային ինֆորմացիոն դաշտի լրատվական բլոկի աշխարհագրական և թեմատիկ կառուցվածքները չեն համապատասխանում Հայաստանի ազգային անվտանգության և ռազմավարական զարգացման նպատակներին:

Աշխարհագրական կառուցվածք.- Լրատվական ժամանակի մոտ կեսը տրամադրվում է այն երկրներին և տարածաշրջաններին, որոնք չեն ստանձնել որևէ պարտավորություն Հայաստանի ազգային անվտանգության և տնտեսական զարգացման հարցերում: Միաժամանակ, տարօրինակ կերպով քիչ են Հայաստանի ռազմավարական և ռազմական հիմնական դաշնակցի՝ Ռուսաստանի մասին լուրերը, որոնց տրամադրվող ժամանակը 7 անգամ զիջում է արևմտյան երկրներին տրամադրվող ժամանակին: Այն դեպքում, երբ Ռուսաստանում բնակվում է 1 միլիոնից ավելի հայ, որոնց մասնավոր տրանսֆերտները կազմում են Հայաստանի ՀՆԱ 16%-ը, իսկ Ռուսաստանում տեղի ունեցող դրական զարգացումները և ցնցումներն ամենահզոր գործոններն են Հայաստանի տնտեսական, քա-

ղաքական և ռազմական անվտանգության հարցերում: Ընդ որում, Ռուսաստանի վերաբերյալ «Արմենիա» հեռուստաալիքի լուրերում բացասական բնույթի լուրերի ժամանակը կրկնակի գերազանցել է դրական բնույթի լուրերի ժամանակին:

Հայաստանի հաջորդ կարևորագույն ռազմավարական դաշնակցի և հարևանի՝ Իրանի մասին լուրերին հատկացված ժամանակն էլ ավելի տարօրինակ կերպով շատ քիչ է: Բոլոր երկրների շարքում այն կիսում է 19-20-րդ տեղը՝ Կարիբյան կղզիների հետ:

Հայաստանի մասին լրատվությունը խիստ անհամամասնորեն կենտրոնացված է մայրաքաղաքային լուրերի վրա: Շատ քիչ են մարզային լուրերը:

Խիստ անհանգստացնող է Արցախի մասին լրատվության շատ փոքր ծավալը:

Թեմատիկ կառուցվածք.- Լրատվության թեմատիկ կառուցվածքը չի համապատասխանում Հայաստանի ռազմավարական զարգացման նպատակներին: Եթե «աշխարհի ապագան» պատկանում է գիտական, տեխնոլոգիական և մտավոր բարձր զարգացած հասարակություններին, միաժամանակ՝ Հայաստանը պետական մակարդակով որպես զարգացման կարևորագույն ռազմավարական հիմք և նպատակ է առաջադրել *գիտելիքահեն տնտեսության և հասարակության կազմավորումը,* ապա խիստ տարօրինակ է և անհանգստացնող, երբ *հեռուստատեսային լրատվական դաշտում գիտությանը և տեխնոլոգիաներին է տրամադրվում ժամանակի ընդամենը 3%-ը՝ ավելի քիչ, քան շոու բիզնեսի սկանդալային իրադարձություններին, քրեական իրադարձություններին, աղետներին, եղանակի տեսությանը և սպորտին տրամադրվող ժամանակը:*

Սոցիալական ոլորտի լուրերի ազդեցության տակ հասարակության շրջանում տպավորություն կարող է կազմավորվել, թե Հայաստանում բնակվում են հիմնականում մտավոր հետամնացներ և բռնության ենթարկված կանայք, որոնց կարիքները պետք է առաջնահերթ հոգալ: Հայաստանի կերպարի վերաբերյալ այդպիսի պատկերացումներ ունեցող հասարակությունում կարող է դժվարին հարց առաջանալ՝ *արդյո՞ք նման*

երկրում կարող է զարգանալ գիտելիքահեն տնտեսություն, որի արդյունքում էապես կբարելավվի բնակչության լայն շերտերի վիճակը:

Այսպիսով, Հայաստանի հեռուստատեսության լրատվական հաղորդումների ուսումնասիրությունը հանգեցնում է հետևյալ հիմնական եզրակացությանը:

Հայաստանի հեռուստատեսության լրատվական ինֆորմացիոն դաշտը խարխլում է ազգային անվտանգության տեսակետից կարևոր կրիտիկական ենթակառուցվածքը՝ Հայաստանի հասարակության պատկերացումներում ազգային զարգացման տեսակետից նպաստավոր «աշխարհի կերպարը»:

Առաջարկներ.- Մեր կարծիքով, Հայաստանի Հանրապետության կառավարության նախաձեռնությամբ անհրաժեշտ է քննարկումներ սկսել Հայաստանի հեռուստատեսային ինֆորմացիոն դաշտի վերաբերյալ՝ հեռուստաընկերությունների ղեկավարների, ինֆորմացիոն անվտանգության ոլորտի մասնագետների, հասարակագիտական հանրության և Հայաստանի կառավարության ներկայացուցիչների միջև՝ պայմանավորվածություններ ձեռք բերելու համար, թե ինչպես կարգաբերել Հայաստանի հեռուստատեսային լրատվական ինֆորմացիոն դաշտը, որպեսզի այն նպաստի Հայաստանի ազգային անվտանգության և ռազմավարական զարգացման նպատակներին:

ԼՐԱՏՎԱԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հ1՝ «Օրակարգ», Արմենիա՝ «Ժամը», Շանթ՝ «Հորիզոն», Հ3՝ «Օրը լրատվական» հիմնական թողարկումների օրինակով

Դիանա Գալստյան[*], *Լիլիթ Հակոբյան*[**]

Հեռուստատեսությունը սոցիալական և մշակութային մեծ ազդեցություն ունի հասարակության վրա: Այդ ազդեցության ամբողջական պատկերը հասկանալու, գնահատելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել, թե ինչ են մատուցում հեռուստաընկերությունները հասարակությանը: *«Տեղեկատվական անվտանգության կրիտիկական ենթակառուցվածքների վերհանում և վերլուծություն»* հետազոտության շրջանակներում ծրագրել ենք ուսումնասիրել ամբողջական հեռուստաբովանդակությունը՝ հեռուստալուրերը, վերլուծական հաղորդումները, ժամանցային հաղորդումները, սերիալները, դուրս բերելու համար, թե ինչ վարքային մոդելներ և արժեքներ են հեռարձակվում այսօր հեռուստատեսությամբ: Այդ նպատակով կանդրադառնանք նշված բաղադրիչներից յուրաքանչյուրին:

Հոդվածի շրջանակներում մասնավորապես կանդրադառնանք լրատվական հաղորդումներին: Ինչպես նշում է Դ.Դոնդուրեյը, «*լուրերը ոչ միայն բոլոր մեդիաների հիմքն են, այլ նաև հասարակական կարծիքի, տրամադրության ձևավորման հիմնային մեխանիզմ են*»[1]: Լրատվական նյութերի ընտրության համար հետազոտողները սահմանում են մի քանի ստանդարտ չափանիշներ.

- Նորույթ (յուրօրինակ, առօրյա կյանքից առանձնացող ինֆորմացիա)
- Սոցիալական նշանակություն (որքան կարևոր են լսարանի համար

[*] «Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի ղեկավարի տեղակալ:
[**] «Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի փորձագետ:
[1] *Дондурей Д.*, Телевидение: режиссура реальности, М., 2007, с. 108.

ինֆորմացիան և դրանով հետաքրքրվածությունը)

- Ակտուալություն (ժամանակավրեպ չէ՞ արդյոք նորությունը)
- Տարածքային չափանիշ (իրադարձության աշխարհագրությունը)
- Զարգացում (հետևանքները)
- Անձնավորում (իրադրության մասին այլ մարդկանց միջոցով ներկայացում՝ փորձագետներ, ականատեսներ և այլն):

Սույն հոդվածի շրջանակներում կներկայացնենք հեռուստալուրերի բովանդակային վերլուծության[2] մի քանի տվյալներ, դիտարկված հեռուստաալիքների լրատվական թողարկման կառուցվածքը (ո՞ր ոլորտի նորություններին է տրվում նախապատվությունը), մատուցվող լուրերի հիմնական թեմատիկ ուղղվածությունը և հաճախությունը, ինչպես նաև հաղորդավարի դերը լրատվության հաղորդման մեջ՝ լսարանի վրա ազդեցության առումով:

Հետազոտության ընթացքում դիտարկվել են 4՝ «Հ1», «Արմենիա», «Շանթ», «Հ3» հեռուստաալիքների 2017թ. սեպտեմբերի 13-20-ն ընկած ժամանակահատվածի լրատվական հաղորդումների հիմնական թողարկումները՝ «Օրակարգ» (Հ1)՝ 21:00-21:35, «Ժամը» («Արմենիա»)՝ 20:00-20:50, «Հորիզոն» («Շանթ»)՝ 22:00-22:35, «Օրը լրատվական» (Հ3)՝ 21:30-22:00 (տե՛ս *Նկար 1*): Հեռուստաալիքներն ընտրվել են հետևյալ չափանիշներով. «Հ1»՝ որպես հանրային հեռուստաընկերություն, «Արմենիա», «Շանթ»՝ առավել մեծ լսարան ունեցող հեռուստաալիքներ, իսկ Հ3-ը՝ որպես տիպային հեռուստաալիք: Ըստ «ԱԴՄՈՍՖԵՐ ԱՐՄԵՆԻԱ» ընկերության իրականացրած մոնիթորինգի տվյալների՝ համապատասխան լրատվական հաղորդումների առաջին հնգյակում առաջատարն են «Հորիզոն»-ը («Շանթ») և «Ժամը»-ը («Արմենիա»)[3]:

[2] Առաջին անգամ հեռուստատեսային լուրերի վերլուծությանն անդրադարձել է *Glasgow Media Group*-ը, որը հայտնի է նաև Գլասգո Մեդիա համալսարան (Շոտլանդիա) անվամբ: 1976թ. սկսած՝ հրատարակում է իր հետազոտությունների արդյունքները «Վատ լուրեր» (*«Bad News»*) վերնագրով:

[3] http://admosphere.am/?p=6754&lang=HY

Նկար 1

Լրատվական թողարկման կառուցվածքը և առանձնահատկությունները

Դիտարկված օրերին հեռուստաալիքների հիմնական լրատվական հաղորդումներն (միջինը մոտ 30-40 րոպե) ունեն հստակ ոլորտային տարանջատում՝ *մշակութային, միջազգային, քաղաքական, սպորտային և եղանակի տեսություն:* Պահպանվել են կայուն հերթականություն և կառուցվածք. սկզբում հաղորդվում է պաշտոնական տեղեկատվությունը (այդ օրը տեղի ունեցած կարևոր իրադարձությունը), հայաստանյան այլ նորություններ: Միջազգային լրահոսը ներկայացվել է գերազանցապես հաղորդման երկրորդ մասում: Այնուհետև հաջորդում են սպորտային նորությունները և եղանակի տեսությունը: Այս առումով պետք է նշել, որ «Հ3» հեռուստաընկերությունը, ի տարբերություն մյուս հեռուստաալիքների, դիտարկված օրերին ունեցել է մշակութային նորությունների առանձին բլոկ: Մյուս հեռուստաալիքները մշակութային ոլորտի նորություններին ավելի քիչ հեռուստաժամանակ են հատկացրել՝ ներկայացնելով դրանք այլ նորությունների շարքում: «Հորիզոն» լրատվական թողար-

կումը («Շանթ») ընդմիջվել է «Հեռանկար» քաղաքական-վերլուծական հաղորդումով[4]: «Արմենիա»-ի լրատվական թողարկումը դիտարկված օրերին ընդմիջվել է գովազդային դադարով, ինչով էլ պայմանավորում է լրատվական թողարկման երկար տևողությունը (50 րոպե): «Ժամը» լրատվականի առանձնահատկությունն է նաև «օրվա կադրը»՝ վերջում ցուցադրվում է որևէ զվարճալի, արտասովոր կադր կամ տեսանյութ, հիմնականում որպես աղբյուր հանդես են գալիս սոցիալական ցանցերը:

Ներկայում տարբեր հետազոտությունների արդյունքներով՝ հեռուստատեսությունը սկսում է աստիճանաբար զիջել դիրքերը, այն դիմում է նոր միջոցների՝ իր դերը պահպանելու, ռեյթինգի ապահովման, լսարանի ներգրավման համար: Այդ միջոցներից մեկն է «ինֆոթեյնմենթը»[5]: Դեռևս չկա այդ երևույթի ընդհանրական սահմանումը, սակայն կարող ենք նշել, որ դա *նյութի մատուցման յուրահատուկ ձև է, դրա այսպես ասած «փաթեթավորումը»: Բնութագրող գծերից են ժամանցային երանգավորումը, ձևի գերակայությունը բովանդակության նկատմամբ, հուզականությունը, տեսողական գրավչությունը, հատվածականությունը, ռեյթինգներին կողմնորոշվածությունը*[6]:

Այս երևույթը նկատելի է նաև հայաստանյան հեռուստաալիքներում, դրանով է պայմանավորված ժամանակակից հեռուստաթերում գերակշռող ժամանցային բովանդակությունը: Մեր դիտարկած հեռուստաալիքներից *Infotainment-ին* բնորոշ գծեր առավելապես նկատվել են «Արմենիա»-ում և «Հ1»-ում: «Արմենիա» հեռուստաալիքի *Infotainment*-ը ապահովում են ինչպես հաղորդավարները (մի տաղավարում աշխատում են մի քանի հաղորդավարներ, ովքեր հաղորդման վերջին հատվածում անմիջական զրուցում են իրար հետ), այնպես էլ թողարկման ընթացքում մատուցվող նյութերը՝ անկարևոր ժամանցային նյութեր արտա-

[4] Հաղորդումը տվյալ ուսումնասիրության մեջ ընդգրկված չէ: Այն բովանդակային վերլուծության կենթարկվի հայկական հեռուստաալիքներով հեռարձակվող քաղաքական-վերլուծական հաղորդումների շարքում:

[5] *Infotainment* եզրն առաջացել է անգլերեն *INFOrmation* (ինֆորմացիա) և *enterTAINMENT* (զվարճանք, ժամանց) բառերից: Առաջին անգամ երևույթը վերլուծել է ամերիկացի մեդիա-հետազոտող Նիլ Փոսթմանը, որը 1985թ. իր «Զվարճանալ մինչև մահը» (*Amusing ourselves to death*) գրքում անդրադարձել է հեռուստատեսությունում կիրառվող *«infotainment»* ֆենոմենին:

[6] *Драгун Е.М.,* Инфотейнмент как явление современной медиакультуры: дисс., М., 2015.

սահմանյան աստղերի կյանքից, ինչպես նաև «օրվա կադր» կոչվող հատվածով (օրինակ՝ իսպանական շոուից հատված, թե ինչպես է հաղորդավարներից մեկը մկրատով կտրում մյուսի հագուստը), որը ևս լսարան գրավելու միտում ունի:

«Հ1»-ի «Օրակարգ» լրատվական հաղորդման ընթացքում կիրառվում են սենսացիոն վերնագրեր *(«Ինչպե՞ս է 3550 տարի առաջ նախամարդը հաստատվել և ապրել Արցախում», «Գիտնականն ապացուցել է, որ կատուները հեղուկ են»)*[7], լրատվական հաղորդումներին ոչ բնորոշ ձևակերպումներ, օրինակ. *«Նստաշրջանը տեղի կունենա աշնանը, ճիշտ այն ժամանակ, երբ ճտերն են հաշվում», «Նավթային Ադրբեջանի տնտեսական մայրամուտը», «Գեղեցիկ զեկույցների կեղտոտ հետքերը տանում են Բաքու», «Ծովից ծով Այվազովսկի», «Երկու հանճարեղ ծերուկները՝ Միքելանջելոն և Վերդին»*: «Հ1»-ում կիրառվում են նաև տեղեկատվության հաղորդման տեսողական էֆեկտներ՝ գրաֆիկներ, նկարներ, ինչը ևս հատուկ է *Infotainment-ին:* Նման երևույթները դյուրամարս, հեշտ ընկալելի են դարձնում մատուցվող նյութը:

Հեռուստալուրերի թեմատիկ ուղղվածությունը

Այս կամ այն թեմայի հաճախությունը ցույց է տալիս հեռուստաալիքում տվյալ թեմային տրվող կարևորությունը: Ընդհանուր առմամբ, դիտարկված ժամանակահատվածում հեռուստալուրերում բավական մեծ ծավալ են զբաղեցրել *տնտեսական* ոլորտին առնչվող թեմաները: Այս առումով բավական բարձր ցուցանիշ են գրանցել «Հ1» և «Արմենիա» հեռուստաալիքները՝ համապատասխանաբար 30.2% և 22.6% (*Աղյուսակ 1*): Տնտեսական ոլորտի նորություններին ամենաքիչ հեռուստաժամանակ է տրամադրել «Հ3»-ը՝ 7.1%: Դիտարկված օրերի ընթացքում գլխավոր քաղաքական թեմա համարվող՝ նոր վարչապետի և կառավարության պաշտոնավարման մեկ տարվա ամփոփումը ևս առավելապես ներկայացվել է

[7] Տեսանյութը պատմում է այն մասին, որ «*Հարվարդում անցկացվել է Շնորհելյան կամ հականորհելյան մրցանակաբաշխություն գիտության ամենատարօրինակ նվաճումների համար: Գիտնականն ապացուցել է, որ կատուները հեղուկ են՝ հիշեցնելով հեղուկի սահմանումը, որ այն նյութ է, որը կարող է ընդունել անոթի ձևը, որում գտնվում է», 16.09.2017, «Հ1»:*

տնտեսական ոլորտի տեսանկյունից (ներկայացվել է նախորդ մեկ տարվա ընթացքում ոլորտում տեղի ունեցած իրադարձությունների, փոփոխությունների, գրանցված հաջողությունների համատեքստում)։ Դիտարկված ժամանակահատվածում քիչ են եղել *ներքին քաղաքական* ոլորտի նորությունները, հավանաբար դա պայմանավորված է ՀՀ ներքաղաքական կյանքում համեմատաբար խաղաղ ժամանակահատվածով, քաղաքական թեման լրահոսում մեծ մասամբ ապահովել են միջազգային լուրերը, ինչով պայմանավորված են 29.2% («Հ3») և 29.1% («Շանթ») բարձր տոկոսային ցուցանիշները (տե՛ս *Աղյուսակ 1*)։

Աղյուսակ 1

Հեռուստաընկերությունների
լրատվական հաղորդումների տևողության ծավալն ըստ ոլորտների

	Թեմատիկ ուղղություններ/ ոլորտներ	«Արմենիա»	«Հ1»	«Հ3»	«Շանթ»	Ընդամենը
1.	Տնտեսական	22.6%	30.2%	7.1%	18.1%	21.1%
2.	Քաղաքական	13.8%	13.4%	29.2%	29.1%	20.1%
3.	Սոցիալական	14.8%	14.5%	13.8%	10.1%	13.4%
4.	Սփյուռք	9.7%	11.7%	1.3%	9.8%	8.9%
5.	Ցեղասպանություն	2.6%	1.5%	1.8%	0.0%	1.5%
6.	Մշակութային	7.9%	12.0%	18.2%	4.4%	10.0%
7.	Աղետներ	8.2%	4.1%	8.3%	8.1%	7.0%
8.	Սպորտ	7.0%	0.6%	11.8%	0.9%	4.4%
9.	Շոու բիզնեսի իրադարձություններ	4.3%	4.2%	2.4%	5.5%	4.2%
10.	Եղանակ	2.7%	0.1%	2.0%	9.1%	3.4%
11.	Բնապահպանություն	3.6%	2.8%	0.9%	2.4%	2.6%
12.	Ռազմական	2.7%	4.5%	1.0%	0.8%	2.5%
13.	Իրավական	0.0%	0.4%	2.3%	1.7%	0.9%
14.	Ընդամենը	100.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%

Դիտարկվող ժամանակահատվածում Սփյուռքին և նրան առնչվող խնդիրներին անդրադարձել են Հայրենիք-Սփյուռք 6–րդ համաժողովի շրջանակներում: Համաժողովը մանրամասն լուսաբանվել է բոլոր հեռուստաալիքներով, յուրաքանչյուր հեռուստաալիք՝ իր սեփական ռեպորտաժներով, սակայն տարբեր շեշտադրումներով: «Հ1»-ի «Օրակարգ»-ում առավել մանրամասն լուսաբանվել են ՀՀ պաշտոնյաների հարցազրույցները, համեմատաբար ավելի քիչ էին սփյուռքահայերի հետ հարցազրույցները: Մինչդեռ «Շանթի» «Հորիզոն», «Արմենիայի» «Ժամը» և «Հ3»-ի «Օրը» լրատվականներում, բացի պաշտոնական ելույթներից, առկա էին նաև մասնակից սփյուռքահայերի կարճ հարցազրույցներ, որոնցում վերջիններս խոսել են իրենց համայնքի խնդիրներից և Հայրենիք-Սփյուռք կապի ու փոխհարաբերությունների մասին:

Մշակութային նորություններին տրամադրվող հեռուստաժամանակով առաջատարն է «Հ3» հեռուստաընկերությունը՝ 18.2%: Այն ունի հստակ առանձնացված մշակութային լուրերի բլոկ, որտեղ անդրադառնում է տարբեր ցուցահանդեսների, մշակութային գործիչների հոբելյանների: Մյուս հեռուսաալիքներում մշակութային նորությունները ներկայացվել են հայաստանյան այլ լուրերին զուգահեռ:

Հետաքրքրական է, որ սոցիալական ոլորտին վերաբերող նյութերում տեսանելի էր գովազդի բաղադրիչը, այսինքն՝ սոցիալական խնդիրները մեծ մասամբ բարձրաձայնվել են այն դեպքում, երբ դրանք լուծում են ստացել որևէ բարերարի կողմից: Հեռուստալուրն այս դեպքում կառուցվել է ոչ թե հիմքում ունենալով կոնկրետ խնդիրը, այլ ռեպորտաժը կառուցվել է տվյալ անձի կամ կազմակերպության շուրջ, նրա փառաբանմամբ՝ նմանվելով գովազդի: Օրինակ՝ «Տավուշի մարզի 11 համայնքներում իրականացրած 16 ծրագրերի համար Գրանդ Հոլդինգի տնօրեն Միքայել Վարդանյանը տրամադրել է 108 մլն դրամ, որով լուծվել են անհրաժեշտ գյուղտեխնիկայի, ճանապարհի, մանկապարտեզի գույքի, ջրի և այլ խնդիրներ» (15.09.2017, «Շանթ») կամ «Գերմանահայ բարերար Մուրադ Աքյուզի ջանքերով նորոգվել է Թահիրովի մանկապարտեզը, կառուցվել է մարզադաշտ» (19.09.2017, «Հ1»):

Պետք է նշել, որ նույն իրադարձության լուսաբանումը տարբեր ալիքներով ունեցել է տարբեր շեշտադրումներ: Օրինակ, Հայ-ռուսական Սլավոնական համալսարանի 20-ամյակին նվիրված միջոցառումը «Հ1»-ը լուսաբանել է որպես կրթության, գիտության ոլորտի իրադարձություն, իսկ «Արմենիա»-ն լուսաբանել է իրադարձությունը՝ դրան հաղորդելով քաղաքական նրբերանգներ. մասնավորապես՝ շեշտադրվել է «Սլավոնական համալսարանի ունեցած ներդրումը հայ-ռուսական բարեկամության պահպանման և ամրապնդման գործում»:

Մեկ այլ առանձնահատկություն էլ է նկատվել. դիտարկված օրերի ընթացքում նույն իրադարձության լուսաբանմանը տարբեր ալիքներով տարբեր ժամանակահատված է տրամադրվել: Օրինակ, Հայաստանի Հանրապետությունում Եվրոպական միության պատվիրակության նորանշանակ ղեկավար, դեսպան Պյոտր Սվիտալսկու մամուլի ասուլիսը, որն առավել մանրամասն ներկայացվել է «Արմենիա»-ի և չափազանց հակիրճ՝ «Հ1»-ի եթերում:

Հաղորդավարի դերը լրատվական հաղորդման մեջ

Ինչպես հեռուստատեսային բոլոր հաղորդումներում, այնպես էլ լրատվականներում կարևոր է հաղորդավարի դերը: Նա հաղորդման դեմքն է: Հաղորդավարի գործոնը կարևոր է ինչպես հաղորդման վարկանիշի, այնպես էլ լսարանի վրա ունեցած ազդեցության տեսակետից: Ժամանակին (օրինակ՝ խորհրդային ժամանակաշրջանում) հեռուստալուրերի հաղորդավարների գործառույթը միայն լուր հաղորդելն էր, փոխանցելը, այդ պատճառով խորհրդային շրջանի հաղորդավարներն ունեին զուսպ, չեզոք պահվածք և հաղորդում էին նախապես մշակված տեքստերը: Տեղեկատվությունը հաղորդվում էր առանց ավելորդ ժեստերի, միմիկայի և շեշտադրումների: Ներկայում պատկերն այլ է. լուրերի հաղորդավարներն ունեն ոչ միայն տեղեկատվությունը փոխանցելու ֆունկցիա, այլև հաճախ անմիջականորեն մասնակցում են լուրի ստեղծմանը (օրինակ՝ թղթակիցների հետ զրուցելիս)՝ շեշտադրումներով և միմիկայով իրենց վերաբերմունքը ցուցադրելով հաղորդվող նյութի նկատմամբ: Վ.Կուզմի-

նան գրում է. *«Հեռուստատեսային տեքստը վերբալ և ոչ վերբալ բաղկացուցիչների մտային և հորինվածքային ամբողջությունն է: Այլ կերպ ասած՝ լրագրողի տեքստը ոչ միայն բառեր են, որոնք հեռարձակվում են եթերից, նույնիսկ տարրական ձայնի երանգի փոփոխությունը կարող է հիմնովին փոխել նախադասության իմաստը, նշանակում է՝ նաև ազդել լսարանի կարծիքի վրա»*[8]: Երկու հեռուստաալիքների եթերում կարող են լինել նույն կադրերը, սակայն դրանց մեկնաբանությունները կարող են խիստ տարբերվել, այդ թվում և լրագրողի ինտոնացիայի, նորության ժամանակ ցուցադրվող կադրերի պատճառով: Սա ինֆորմացիոն պատերազմներում հաճախ կիրառվող մեխանիզմներից է:

Անդրադառնալով մեր դիտարկած օրերի ընթացքում 4 հեռուստաալիքների՝ «Հ1»-ի և «Արմենիա»-ի հաղորդավարներին՝ կարող ենք նշել, որ վերջիններս աչքի են ընկել հուզական խոսքով (ընդգծված դրական երանգավորմամբ են հաղորդվել պաշտոնական լուրերը, ընդգծված բացասական երանգավորմամբ ներկայացվել են Ադրբեջանին վերաբերող նյութերը), իսկ «Շանթ»-ի և «Հ3»-ի հաղորդավարների խոսքը չեզոք և համաչափ էր: «Արմենիա»-ի հիմնական թողարկման տաղավարում, որպես կանոն, աշխատել են մի քանի լրագրողներ (երկու հաղորդավար, սպորտային նորությունների հաղորդավար, եղանակի տեսության հաղորդավար)՝ ապահովելով բազմազանություն:

Ամփոփում

Հոդվածում բովանդակային վերլուծության են ենթարկվել հայկական առաջատար 3՝ «Արմենիա», «Շանթ», «Հ1» հեռուստաալիքների և տիպային «Հ3» հեռուստաալիքի լրատվական թողարկումները: Վերլուծության ընթացքում փորձ է արվել դուրս բերել լրատվական թողարկումների բովանդակության (գերակա թեմաների), լրատվության մատուցման ձևերի նմանությունները և տարբերությունները: «Հ1» և «Արմենիա» հեռուստաալիքները ներկայացված թեմաների առումով մոտ են միմյանց և տարբերվում են «Շանթ»-ից ու «Հ3»-ից: Դիտարկված օրերին «Շանթով» և

[8] *Кузьмина Н.А.,* Современный медиатекст, Учебное пособие, Омск, 2011, с. 169.

«Հ3»-ով ներկայացվել են լուրեր և թեմաներ, որոնք բացակայել են «Հ1»-ում և «Արմենիա»-ում, հատկապես մշակութային և սպորտի ոլորտի լուրերում:

Անդրադարձ է կատարվել նաև հեռուստատեսության ասպարեզում ներկայում տարածում գտած «ինֆոթեյնմենթ» երևույթին և հայկական հեռուստաալիքներում դրա կիրառման օրինակներին: Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դիտարկված հեռուստաալիքները լուրերի թողարկումներում այս կամ այն չափով կիրառում են ժամանցայնության (*Infotainment*) տարբեր հնարքներ: Այն մի կողմից միտված է նյութը հեշտ ընկալելի դարձնելուն և դիտողականությունն ապահովելուն, մյուս կողմից, սակայն, ժամանցային բնույթ է հաղորդել լրատվական հաղորդմանը:

ՍՓՅՈՒՌՔԻ ԻՆՔՆԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀՈՒՆԱԿԱՆ ՓՈՐՁԻՑ

Վահրամ Հովյան[*]

Հունական սփյուռքի թվաքանակը և աշխարհագրական սփռվածությունը

Արտերկրում բնակվող հույների թիվը, ըստ Հունաստանի ԱԳ նախարար Ն.Կոձիասի, կազմում է 8 մլն[1]: Հունական առավել խոշոր համայնքները, ըստ տարածաշրջանների, ունեն հետևյալ պատկերը.

1. *Հյուսիսային Ամերիկայի* երկրներից խոշոր հունական համայնքներ կան ԱՄՆ-ում և Կանադայում: ԱՄՆ-ում հունական համայնքի թվաքանակը կազմում է 3 մլն: Սակայն այս ցուցանիշը ոչ պաշտոնական է և, թերևս, զգալիորեն չափազանցված: Պաշտոնական տվյալներով՝ ԱՄՆ-ում բնակվող հույների թիվը կազմում է մոտ 1.3 մլն: ԱՄՆ-ում հույները կենտրոնացած են Նյու Յորքում, Բոստոնում և Չիկագոյում[2]: Կանադայում հունական համայնքի թվաքանակը կազմում է 350-400 հազ.:
2. *Հարավային կամ Լատինական Ամերիկայի* երկրներից ամենախոշոր հունական համայնքը գտնվում է Բրազիլիայում (30 հազ.), այլ երկրներում հունական համայնքները փոքրաթիվ են. Չիլիում՝ 5 հազ., Արգենտինայում՝ 5 հազ., Վենեսուելայում՝ 2 հազ. և Ուրուգվայում՝ 2 հազ.:
3. *Եվրոպայում* խոշորագույն հունական համայնքները գտնվում են Գերմանիայում և Մեծ Բրիտանիայում, որտեղ հույների թվաքանակը

---

[*] «Նորավանք» ԳԿՀ Գիտական-փորձագիտական խորհրդի քարտուղար, Հայագիտական կենտրոնի ավագ փորձագետ:

[1] Թեև այլ աղբյուրներ ավելի համեստ թվեր են մատնանշում: Համաձայն Արտերկրի հույների գլխավոր քարտուղարության՝ հունական սփյուռքի թվաքանակը կազմում է 5 մլն: http://www.ggae.gr/frontoffice/portal.asp?cpage=node&cnode=16&clang=1; մեկ այլ աղբյուր մատնանշում է 7 մլն ցուցանիշը: The Greek diaspora - Greeks outside Greece, http://www.hellenism.net/greece/greek-culture/greek-diaspora/

[2] The Greek diaspora - Greeks outside Greece, http://www.hellenism.net/greece/greek-culture/greek-diaspora/

կազմում է համապատասխանաբար՝ 400-450 հազ. և 400 հազ.։ Համեմատաբար խոշոր համայնքներ կան նաև Ֆրանսիայում (55 հազ.), Իտալիայում (45 հազ.), Բելգիայում՝ (38 հազ.), Նիդերլանդներում (30 հազ.), Շվեդիայում (26 հազ.), Բուլղարիայում (25 հազ.), Շվեյցարիայում (11 հազ.), Ռումինիայում (10 հազ.)։ Այլ երկրներում հունական սփյուռքը փոքրաթիվ է՝ Ավստրիայում (8 հազ.), Իսպանիայում (6 հազ.), Հունգարիայում (5 հազ.), Դանիայում (4 հազ.), Լեհաստանում (3 հազ.), Չեխիայում (2.4 հազ.)։

4. *Հետխորհրդային* երկրներում ամենամեծ հունական համայնքները Ռուսաստանում և Ուկրաինայում են (համապատասխանաբար՝ 100 հազ. և 92 հազ.)։ Քիչ թե շատ նշանակալի հունական համայնքներ կան նաև Վրաստանում (12 հազ.), Ղազախստանում (12 հազ.), Բելառուսում (4.5 հազ.), Ուզբեկստանում (4 հազ.)։
5. *Մերձավոր ու Միջին Արևելքի և Ծոցի* երկրներից համեմատաբար խոշոր հունական համայնք կա Իսրայելում (13 հազ.)։ Մոտ 4 հազարանոց հունական համայնք կա Եգիպտոսում։ Հետաքրքրական է, որ Եգիպտոսում հայկական և հունական համայնքները (թերևս, քրիստոնյա համայնքներ լինելու ընդհանրությամբ պայմանավորված) ենթարկվել են միևնույն գործոնների ազդեցությանը և կրել գրեթե նույն հետևանքները։ 1950-ական թթ. սկսած՝ նախագահ Գամալ Աբդ ալ Նասերի ավտորիտար իշխանությունը՝ զուգակցված արաբական ազգայնականության, ինչպես նաև հակաքրիստոնեական դիմագիծ ստացող իսլամականության վերելքի հետ, հանգեցրել է մեծ քանակությամբ հայերի ու հույների արտագաղթին այդ երկրից, որն էլ իր հերթին հանգեցրել է երբեմնի ծաղկուն հայկական և հունական համայնքների եթե ոչ իսպառ քայքայմանը, ապա խիստ թուլացմանը, այն աստիճան, որ դրանք այսօր ունեն հիմնականում խորհրդանշական կշիռ հայկական և հունական սփյուռքերի ընդհանուր համատեքստում։ Մինչդեռ նախքան 20-րդ դարի 50-ական թթ., օրինակ, Ալեքսանդրիան անտիկ ժամանակներից ի վեր եղել է հունական մշակութային և տնտեսական կյանքի կարևոր կենտրոն։

6. *Աֆրիկյան մայրցամաքում* միայն Հարավաֆրիկյան Հանրապետությունում է առկա հունական նշանակալի սփյուռք: Այստեղ հույների թվաքանակը կազմում է 50 հազ.:
7. *Հեռավոր Արևելքի երկրներում,* հայկականի նման, հունական համայնքներն էլ նոր-նոր են ձևավորվում: Չինաստանում երկու համայնքների ներկայացուցիչների թվաքանակը կազմում է շուրջ հազարական մարդ:
8. Եվ վերջապես, *Օվկեանիայի* երկրներում՝ Ավստրալիայում և Նոր Զելանդիայում հունական սփյուռքն ունի բավական նշանակալի ներկայություն: Ավստրալիայում հույների թվաքանակը կազմում է 650-700 հազ., իսկ Նոր Զելանդիայում՝ շուրջ 5 հազ.:

Ամփոփելով սույն հատվածը՝ նշենք, որ, չնայած վերոհիշյալ բոլոր տարածաշրջաններում հունական համայնքների առկայությանը, այնուամենայնիվ, կարելի է ասել, որ հունական սփյուռքը կենտրոնացած է անգլոսաքսոնական աշխարհում՝ ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում, Ավստրալիայում և Կանադայում[3]:

Ինքնակազմակերպման խնդիրներ

Հունական սփյուռքի ինքնակազմակերպման մոդելը հիմնված է բազմաստիճան (քառաստիճան) կոնֆեդերալիզմի (համադաշնայնության) սկզբունքի վրա, որտեղ.

1. Առաջին աստիճանի վրա գտնվում են տեղական համայնքները և կազմակերպությունները, որոնք գործում են տվյալ երկրի որևէ քաղաքի կամ վարչատարածքային միավորի (մարզ, նահանգ, շրջան և այլն) շրջանակներում:
2. Երկրորդ աստիճանի վրա գտնվում են տեղական համայնքների և հաստատությունների ֆեդերացիաները (դաշնությունները), որոնք իրենց գործունեությունը ծավալում են տվյալ երկրում՝ համապետական մակարդակով:

[3] Տե՛ս նույն տեղում:

3. Երրորդ աստիճանի վրա տարբեր տարածաշրջանների երկրների հունական համայնքների կոնֆեդերացիաներն են, որոնք գործում են միջազգային՝ տարածաշրջանային մակարդակով: Այդ տարածաշրջանները 7-ն են. ա) Կանադա, բ) ԱՄՆ[4], գ) Կենտրոնական և Հարավային Ամերիկա, դ) Եվրոպա, ե) հետխորհրդային տարածք, զ) Օվկեանիա – Հեռավոր Արևելք, է) Աֆրիկա – Մերձավոր/Միջին Արևելք:
4. Եվ վերջապես, չորրորդ աստիճանի վրա է գտնվում Արտասահմանի հույների խորհուրդը (*The Council of Hellenes Abroad*), որն աշխարհի մակարդակով միավորում է վերոհիշյալ կառույցները՝ հանդիսանալով նրանց ընդհանուր «հովանոցը»: Սույն կազմակերպությունը խորհրդակցական մարմին է Հունաստանի Հանրապետության հետ հարաբերություններում և համաձայն այդ երկրի սահմանադրության՝ ներկայացնում է հունական սփյուռքը (արտահայտում է վերջինիս կարծիքը)[5]:

Հունական սփյուռքի ինքնակազմակերպման մոդելն ուշագրավ է նրանով, որ, մի կողմից, աստիճանակարգային (հիերարխիկ) կառուցվածքի հիման վրա միավորում է բոլոր համայնքներն ու հաստատությունները՝ ապահովելով միասնական կառավարման կենտրոն, իսկ մյուս կողմից՝ առանձին համայնքներն ու հաստատությունները պահպանում են իրենց ինքնուրույնությունը, քանի որ միավորումը հիմնված է համադաշնության սկզբունքի վրա: Այլ կերպ ասած՝ հունական սփյուռքի պարագայում առկա է ապակենտրոնացված միավորման մոդելը, որը հիմնված է «բազմազանություն միասնության մեջ» սկզբունքի վրա:

[4] Չնայած ԱՄՆ-ը և Կանադան ոչ թե տարածաշրջաններ, այլ առանձին երկրներ են, այնուամենայնիվ, հաշվի առնելով այդ երկրների մեծության, դրանցում հունական համայնքների ստվարաթվության, այդ երկրների միջազգային դերի ու կշռի և այլ գործոնների համադրությունը՝ դրանք դիտվում են որպես տարածաշրջաններ:
[5] Greek Diaspora and the General Secretariat for Greeks Abroad, http://www.ggae.gr/frontoffice/portal.asp?cpage=node&cnode=16&clang=1

Հետևություններ

Հայկական սփյուռքի պարագայում մինչ այժմ եղել են դաշնային կամ համադաշնային հիմունքներով միավորման որոշ տարրեր։ Դա հատկապես բնորոշ է եվրոպական երկրների հայ համայնքներին։ Օրինակ՝ Ֆրանսիայի հայկական կազմակերպությունների համակարգող խորհուրդը (ՖՀԿՀԽ) կամ Շվեդիայի հայկական միությունների համակարգող մարմինը (ՇՀՄՀՄ) կարելի է դիտել որպես այդ երկրների հայկական կազմակերպությունների համադաշնություն։ Հոլանդահայ կազմակերպությունների ֆեդերացիայի (ՀՀԿՖ) անվանումն ավելի է համապատասխանում դաշնայնության սկզբունքին։ Մի կողմից՝ այս կառույցները միավորում են Ֆրանսիայի, Շվեդիայի, Հոլանդիայի հայկական կազմակերպությունները և համակարգում նրանց գործունեությունը, իսկ մյուս կողմից՝ յուրաքանչյուր հայկական կազմակերպություն ինքնուրույն է և պահպանում է անկախ գործելու հնարավորությունները։ Դրա լավագույն վկայությունը դրսևորվեց Ֆրանսիայի վերջին նախագահական ընտրությունների գործընթացում, երբ ՖՀԿՀԽ-ն և Ֆրանսիայի Հայ դատի հանձնախումբը միմյանցից անկախ արտահայտեցին իրենց դիրքորոշումն այդ ընտրությունների կապակցությամբ՝ սատարելով Էմանուել Մակրոնի թեկնածությանը[6]։

Վերոհիշյալ օրինակները, սակայն, միայն առանձին դեպքեր կամ տարրեր են դաշնային/համադաշնային հիմունքներով սփյուռքի միավորման։ Իսկ առհասարակ, որևէ մոդելով ողջ հայկական սփյուռքի ինստիտուցիոնալ միավորման խնդիրը (նրա մասնատվածությունը՝ դավանական, կուսակցական, տարածքային և այլ հիմունքներով հաղթահարելու նպատակով), չնայած Սփյուռքի ավելի քան հարյուրամյա գոյությանը, դեռևս շարունակում է մնալ օրակարգային։

Սփյուռքի ինքնակազմակերպման հարցում հունական փորձից կարելի է վերցնել վերջինիս կոնֆեդերատիվ մոդելը։ Հայկական սփյուռքի պարագայում նույնպես այն կարող է լինել քառաստիճան, որի.

1. Առաջին աստիճանում կլինեն որևէ երկրի տարբեր քաղաքների կամ շրջանների հայ համայնքները։ Սփյուռքի ինքնակազմակերպ-

[6] Էմանուել Մակրոնը քվեարկության արդյունքներով ընտրվեց Ֆրանսիայի նախագահ։

ման այս ինստիտուցիոնալ «բջիջները» կարելի է կոչել տվյալ քաղաքի կամ շրջանի անունով։ Օրինակ՝ «Հալեպի հայ համայնք»։

2. Երկրորդ աստիճանում կլինեն այդ համայնքների դաշնությունները՝ տվյալ պետության մակարդակով։ Այս դեպքում ինստիտուցիոնալ կառույցը կարելի է կոչել տվյալ երկրի անունով։ Օրինակ՝ «Սիրիայի հայ համայնք», «Սիրիայի հայ համայնքների միություն» կամ «Սիրիայի հայերի միություն»։
3. Երրորդ աստիճանում կլինեն այդ դաշնությունների կոնֆեդերացիաները՝ տարածաշրջանային մակարդակով։ Այս դեպքում ինստիտուցիոնալ կառույցը կարելի է կոչել տվյալ տարածաշրջանի անունով։ Օրինակ՝ «Մերձավոր և Միջին Արևելքի հայ համայնքների միություն»։ Ի տարբերություն հունական սփյուռքի՝ հայկականի պարագայում տարածաշրջանային համադաշնությունները կարելի է ձևավորել հետևյալ կերպ. ա) Հյուսիսային Ամերիկա և Ավստրալիա[7], բ) Հարավային կամ Լատինական Ամերիկա, գ) Եվրոպա, դ) Հետխորհրդային երկրներ, ե) Մերձավոր և Միջին Արևելք, զ) Հեռավոր Արևելք։
4. Եվ վերջապես, չորրորդ աստիճանում կլինի վերոհիշյալ կոնֆեդերացիաները միավորող համաշխարհային մարմինը, որը պայմանականորեն կարելի է կոչել «Սփյուռքահայերի խորհուրդ» կամ «Արտասահմանյան հայերի (ինչպես ընդունված է այլ ժողովուրդների, մասնավորապես՝ հունական, ռուսական և այլ սփյուռքերի պարագայում) խորհուրդ»։

Համադաշնային հիմունքներով հայկական սփյուռքի միավորման որոշ դրսևորումների մասին խոսվեց վերը։ Այնուամենայնիվ, դրա լավագույն օրինակը տալիս է Հայ Ավետարանական եկեղեցին՝ որպես համազգային կառույց։ Վերջինս չունի միասնական նվիրապետություն։ Փոխա-

[7] Նկատի ունենալով, որ Ավստրալիան ԱՄՆ-ի և Կանադայի հետ միասին գտնվում է միևնույն՝ անգլոսաքսոնական քաղաքակրթական տիրույթում։ Նույն հիմնավորմամբ՝ սկզբունքորեն այս տարածաշրջանի մեջ կարելի է ներառել նաև Մեծ Բրիտանիայի հայ համայնքը՝ եվրոպական տարածաշրջանի մեջ թողնելով միայն մայրցամաքային Եվրոպայի երկրների հայ համայնքները։

րենն ունի հինգ տարածաշրջանային միություն, որոնք ներառում են առանձին երկրների Հայ Ավետարանական եկեղեցիները, իսկ վերջիններս էլ՝ առանձին շրջաններինը։ Որպես հիշյալ տարածաշրջանային միությունների գործունեությունը համակարգող ինստիտուցիոնալ մարմին գործում է Հայ Ավետարանական համաշխարհային խորհուրդը։ Այնպես որ, սփյուռքի ինքնակազմակերպման համադաշնային մոդելը՝ տարածքային սկզբունքով, հայ իրականության պարագայում լիովին անծանոթ երևույթ կամ նորություն չէ։ Դրա համար արդեն իսկ կա որոշակի փորձ։

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Լուսինե Տանաջյան՝, Սոնա Ներսիսյան՝՝

Երկրի տնտեսության զարգացման մեջ առանձնահատուկ նշանակություն ունեն ներդրումները: Նշանակալի սոցիալական և հոգևոր ներուժով ու ներդրումային մեծ հնարավորություններով հայկական սփյուռքի առկայությունը, ինչպես նաև Հայաստանի ներգրավվածությունը միջպետական ու միջազգային կազմակերպություններում և հարաբերություններում կարող են ստեղծել նպաստավոր պայմաններ Հայաստանում սփյուռքի գործարար շրջանակների ձեռնարկատիրական գործունեության ծավալման համար:

Հոդվածի նպատակն է էմպիրիկ նյութերի վրա պարզել սփյուռքահայերի ներդրումային գործունեության առանձնահատկությունները Հայաստանում և սփյուռքից գործարարության ձևավորմանը նպաստող պայմանները:

Այս համատեքստում կատարվել է էթնոսոցիոլոգիական հետազոտություն ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի սփյուռքի հետազոտությունների բաժնի աշխատակիցների կողմից՝ ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի ֆինանսական աջակցությամբ[1]:

Ուսումնասիրության մեջ շեշտադրվել են հետևյալ խնդիրները. ձեռներեցությամբ զբաղվելու դրդապատճառները, գործունեության ծավալման խոչընդոտները, ներդրողների ձեռնարկատիրական գործունեության զարգացման հետագա մտադրությունները:

Հետազոտությունն իրականացվել է քվոտային ընտրանքով: Ընտրանքն իրականացվել է ըստ տարբեր երկրներից ներդրողների ներկայացվածության, կազմակերպության չափի, կազմակերպաիրավական տեսա-

---

՝ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող:

՝՝ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող:

[1] «Սփյուռքահայ ձեռներեցները Հայաստանում. նրանց գործունեության փորձը, խնդիրներն ու հեռանկարները» գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ծրագիր, ղեկավար՝ Ռ.Ս. Կարապետյան, 2015-2017թթ.:

կի, գործունեության ձևի: Կիրառվել են ուսումնասիրության որակական հետևյալ մեթոդները. դեպքի ուսումնասիրություն, խորին հարցազրույց, փորձագիտական հարցում, ինֆորմացիայի այլ աղբյուրների, փաստաթղթերի վերլուծություն և այլն:

Տվյալների վերլուծությունն իրականացվել է նկարագրական-վերլուծության մեթոդով:

Առաջնորդվելով կազմակերպությունների աշխատողների քանակով՝ ուսումնասիրվել են փոքր, միջին և մեծ չափի կազմակերպություններ: Ուսումնասիրված կազմակերպությունների մեջ փոքր և միջին ձեռնարկություններն ավելի մեծ թիվ են կազմել: Հետազոտությունում ներառվել են կազմակերպություններ գործունեության հետևյալ երեք ձևերից՝ արտադրություն, ծառայություն, սպասարկում: Դրանք ըստ կազմակերպաիրավական տեսակի ընդգրկել են երկու խումբ՝ ՍՊԸ և ՓԲԸ: Բոլոր կազմակերպություններն ունեցել են առնվազն 2 տարվա փորձ:

Համաձայն հետազոտության տվյալների՝ ներդրողների շրջանում կարելի է շեշտադրել տարիքի և մոտիվացիայի հետ կապը: Ըստ տարիքային առանձնահատկության ներդրողների մոտիվացիաները և նպատակադրումները միմյանցից տարբեր են: Սա կարող ենք նկատել բիզնեսի տնողության պլանավորման, շահույթի ակնկալիքի դեպքում:

Ներդրողների մի մասն ունեցել է նախնական որոշակի պատրաստվածություն, որի շնորհիվ կարողացել է հաղթահարել տեղում ձեռնարկատիրության նրբությունների հետ կապված խնդիրները: Մյուս մասը, լինելով սկսնակ տվյալ ոլորտում, ներդրում անելիս բախվել է ոչ միայն ներդրումային գործընթացի դժվարություններին, այլև տվյալ գործի մեջ առաջացող տարատեսակ խնդիրներին: Վերջինս ազդեցություն է ունենում Հայաստանում բիզնեսի հաստատման և զարգացման գործընթացի վրա:

Ներդրողների հիմնական մասը Հայաստանում հաստատվել է ընտանիքներով, ինչը խոսում է այն մասին, որ գոնե նախնական մտադրությամբ նրանց մնալու և բիզնեսի շարունակման գործընթացը կայուն է:

Չնայած այն հանգամանքին, որ ավելի արդյունավետ կլիներ բիզնես վարել ձեռնարկատիրական միևնույն մշակույթը կրող անձանց հետ և

միավորել ռեսուրսները բիզնեսի զարգացման համար, իրականացնել ներդրման փորձի փոխանակություն, այնուամենայնիվ, սփյուռքահայ ներդրողները նախընտրում են առավելապես անձնական բնույթի կապեր հաստատել Հայաստանում, ծագմամբ հայ ներդրողների հետ: Ներդրողները աշխատակից ընտրելիս վերջիններին հիմնականում նախապատվություն չեն տալիս:

Սփյուռքահայ[2] լինելու փաստը Հայաստանում ներդրումային գործունեություն իրականացնելու կարևոր գործոն է: Կախված նրանից, թե ինչպես են ընկալում սփյուռքահայ ներդրողին հայաստանյան միջավայրում, ձևավորվում է որոշակի վերաբերմունք նրա վարած բիզնեսի նկատմամբ:

Կախված նրանից, թե ինչ շարժառիթ ունի ներդրողը՝ հնարավոր է դուրս բերել նրա գործունեության առանձնահատուկ կողմը, ուղղվածությունը, բնույթը: Ստացված արդյունքները ցույց տվեցին, որ ներդրողների դրդապատճառները կարելի է բաժանել երկու հիմնական խմբի. առաջինի դեպքում ներդրողը նպատակաուղղված կերպով իրականացրել է ներդրումային գործունեություն ՀՀ-ում: Մյուս դեպքում ներդրողները, տեղափոխվելով Հայաստան, սկսել են որոշակի ներդրումային գործունեություն իրականացնել ածանցյալ ձևով:

Ստացված տվյալների համաձայն՝ ներդրումային գործունեություն ծավալելիս ներդրողները բախվել են մի շարք դժվարությունների, որոնք պայմանականորեն կարող ենք բաժանել երկու տեսակի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ խնդիրների շարքին կարելի է դասել, օրինակ, ՀՀ տնտեսական փոքր շուկան, անկայուն տնտեսական միջավայրը, վարչարարական, ինստիտուցիոնալ խնդիրները: Իսկ սուբյեկտիվ խնդիրների մեջ են մտնում, օրինակ, միջավայրային անհամապատասխանությունը, պակաս տեղեկացվածությունը, սոցիալական կապերի բացակայությունը:

Հատկանշական է, որ ներդրողների մի մասն իր ռազմավարության մեջ հատուկ ուղղվածություն է տալիս բիզնեսին՝ անտեսելով այն հանգամանքը, որ վերջինս կարող է առաջացնել մրցակցության կամ սպառ-

[2] Հետազոտության մեջ սփյուռքահայ ներդրող է հանդիսանում այն անձը, ով ինքն իրեն համարում է սփյուռքահայ և զբաղվում է ներդրումային գործունեությամբ:

ման խնդիր, ի վերջո, հանգեցնել շահույթի նվազեցման: Այստեղ կարևոր է այն, որ ներդրողները, կիրառելով այս մոտեցումն իրենց բիզնեսում, փոփոխություն են բերում ձեռնարկատիրական մշակույթի մեջ:

Ընդհանրացնելով հետազոտության արդյունքները՝ կարելի է եզրակացնել, որ.

- ՀՀ-ում սփյուռքահայերի կողմից ներդրումներ իրականացնելու կարևոր դրդապատճառը էմոցիոնալ վերաբերմունքն է, նաև ընտանիքով ՀՀ տեղափոխված լինելու փաստը:
- ՀՀ-ում սփյուռքահայերի ներդրումային գործունեության հիմնական խոչընդոտը բիզնեսի վարման մշակութային տարբերություններն են:
- Սփյուռքահայ ներդրողները, բախվելով տեղական բիզնեսի վարման մշակույթին, ինտեգրվելով դրան կամ հակառակը, իրենց հերթին ներմուծում են այլ մշակույթ: Դա ընձեռում է ձեռնարկատիրական այլընտրանքային գործունեության հնարավորություն և բազմազանեցնում է ՀՀ բիզնես միջավայրը:
- Երբ սփյուռքահայ ներդրողները մտադիր են զարգացնել իրենց բիզնեսը Հայաստանում, առաջացած խնդիրների լուծման համար ձեռնարկում են հատուկ քայլեր՝ օգտվելով միջազգային փորձից կամ մշակելով սեփական ռազմավարություն:
- ՀՀ-ում սփյուռքահայերի ներդրումները հնարավորություն են տալիս դիվերսիֆիկացնել տնտեսական գործունեությունը Հայաստանում, քանի որ նրանք չեն հանդիսանում պետական տնտեսական գործունեության պլանավորման ռազմավարության կրող:

ՍՓՅՈՒՌՔԻ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԱՌՅԱՆՑ ԶԼՄ-ՈՒՄ

Սյուզաննա Բաբսեղյան[*]

Սփյուռքի մարդկային, սոցիալական և ֆինանսական կապիտալը հաճախ դիտարկվում է որպես զարգացման ռեսուրս էթնիկ հայրենիքի համար, որը ներդրումների կարիք ունի: Տարբեր սփյուռքեր այդ ռեսուրսն օգտագործում են տարբեր կերպ՝ հայրենիքի շահերի լոբբինգ ընդունող երկրում, բարեգործություն, կամավորություն, դրամական փոխանցումներ և այլն: Սակայն սփյուռքի քիչ ներկայացուցիչներ են օգտագործում իրենց հիմնական կապիտալը՝ կատարելով ուղղակի ներդրումներ և ստեղծելով նոր ձեռնարկություններ: Մյուս կողմից, սփյուռք ունեցող երկրները տարբեր կերպ են նպաստում և խրախուսում սփյուռքի ներգրավմանն իրենց տնտեսության մեջ, ուղիներ են փնտրում՝ խթանելու սփյուռքի ուղղակի ներդրումները: Շատ հետազոտողներ գտնում են, որ սփյուռքի ներդրումները հայրենիքում գործարարության զարգացման ավելի մեծ հնարավորություն ունեն, քան ոչ սփյուռքյան օտարերկրյա ուղղակի ներդրումները, քանի որ սփյուռքի ներդրումները և ձեռներեցությունը հաճախ ոչ միայն պայմանավորված են առավելագույն շահույթ ստանալու ձգտմամբ, այլ նաև *սոցիալական ճանաչմամբ* (ներդրումը հայրենիքում կարող է պատվաբեր և ողջունելի համարվել սփյուռքի համայնքում և հայրենիքում) և *զգայական մոտիվներով* (հայրենիքին օգնելու էմոցիոնալ բավարարվածություն կամ ծագման երկրի տնտեսությանն աջակցելու պարտավորվածություն)[1]:

Սփյուռքի ներդրումները և ձեռներեցությունն առավել կարևորվում են այն երկրների համար, որոնք գրավիչ չեն օտարերկրյա ուղղակի ներդրումների համար՝ փոքր շուկայի, չզարգացած ենթակառուցվածքների,

[*] ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի հետազոտությունների բաժնի գիտաշխատող:

[1] *Nielsen, Tjai M.* and *Riddle, Liesl,* Why Diasporas Invest in the Homeland: A Conceptual Model of Motivation (July 1, 2007). Available at SSRN,
https://ssrn.com/abstract=987725 or http://dx.doi.org/10.2139/ssrn.987725

կոնֆլիկտների, պատերազմի, քաղաքական ու ինստիտուցիոնալ կառուցվածքի և այլ ցուցանիշների պատճառով: Այս տեսանկյունից Հայաստանը նույնպես, ունենալով մեծ սփյուռք և արտագաղթի բարձր ցուցանիշ, սփյուռքի կապիտալի ներգրավման մեծ պահանջ ունի:

Ներգրավման քաղաքականության մեջ, ի թիվս այլ միջոցների, կարևոր է նաև մեդիայի դերը, որի միջոցով սփյուռքն ավելի մեծ հնարավորություն ունի «կապ հաստատելու» հայրենիքի հետ, տեղեկանալու ներդրումային միջավայրի և պայմանների, վարվող քաղաքականության հետ: ԶԼՄ-ի միջոցով Հայաստանում և սփյուռքում կարող է ձևավորվել պատկերացում Հայաստանի ներդրումային միջավայրի և սփյուռքահայերի դերի մասին և կարծրատիպեր սփյուռքահայ գործարարների կերպարի ու գործարարության հայաստանյան խոչընդոտների վերաբերյալ:

Հայաստանյան մեդիայում ներգրավման քաղաքականության նման դրսևորումների, ինչպես նաև սփյուռքահայ գործարարների կերպարի, նրանց գործունեության շարժառիթների ուսումնասիրության նպատակով «Սփյուռքահայ ձեռներեցները Հայաստանում. նրանց գործունեության փորձը, խնդիրներն ու հեռանկարները» ծրագրի[2] շրջանակներում իրականացվել է Հայաստանում սփյուռքի ներդրումների և սփյուռքահայ գործարարների մասին առցանց ԶԼՄ վերլուծություն:

Հետազոտությունն իրականացվել է որակական բովանդակության վերլուծություն մեթոդի ավանդական մոտեցմամբ[3]: Վերլուծության միավոր է ընտրվել թեման: Ուսումնասիրվել է չորս առցանց ԶԼՄ՝ **1in.am, news.am, tert.am, aravot.am**[4], մեկ տարվա՝ 2016թ. կտրվածքով: ԶԼՄ ողջ հրապարակումներում դիտարկվել են բոլոր այն նյութերը, որոնք առնչվել են սփյուռքի ներդրումներին և սփյուռքահայ ձեռներեցների գործունեությանը Հայաստանում ու Արցախում:

[2] Ծրագիրն իրականացվել է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի հետազոտությունների բաժնի կողմից 2016-2017թթ., ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի ֆինանսավորմամբ: Ծրագրի հեղինակը և ղեկավարը Ռ.Կարապետյանն է:

[3] Որակական բովանդակության վերլուծության այս մոտեցմամբ ուսումնասիրությունը սկսվում է դիտարկմամբ, կոդավորումն իրականացվում է տվյալների վերլուծության ընթացքում, իսկ կոդերը ստացվում են տվյալներից: Տե՛ս *Hsiu-Fang Hsieh* and *Sarah E. Shannon*, Three Approaches to Qualitative Content Analysis, Qualitative Health Research, 2005:

[4] Ընտրված առցանց ԶԼՄ-ն ունեն հասարակական-քաղաքական ուղղվածություն, բարձր վարկանիշ և մեծ լսարաններ, չեն հայտարարում իրենց քաղաքական համակրանքների և նախասիրությունների մասին:

Հարկ է նշել, որ չնայած թեմայի կարևորությանը և ՀՀ-ում սփյուռքի ներդրումների անհրաժեշտության հոչակմանը՝ ուսումնասիրված ԶԼՄ-ից յուրաքանչյուրը 2016թ. ընթացքում հրապարակել է ընդամենը 1-2 տասնյակ նյութեր: Նյութերը տիպայնացվել են ըստ թեմաների և ուղղվածության (տե՛ս *Աղյուսակ 1*):

Աղյուսակ 1

Սփյուռքի ներդրումների և սփյուռքահայ գործարարների մասին ԶԼՄ հրապարակումների խճանկարը

Սփյուռքահայ ձեռնարկատիրոջ գործունեության պատմություն	
Հաջողված	Ձախողված
Սփյուռքահայ գործարարի՝ ներդրում կատարելու մտադրություն	
Դրական	Բացասական
Միջամտություն սփյուռքահայերի բիզնես նախաձեռնություններին	
Խթան	Խոչընդոտ
Ձեռներեցության ոլորտում ինստիտուցիոնալ փոփոխություններ և պետական քաղաքականության	
Նպաստող	Սահմանափակող
Սփյուռքից հնչեցվող գնահատական սփյուռքի ներդրումների վերաբերյալ	
Դրական	Բացասական
Հայաստանից հնչեցվող գնահատական սփյուռքի ներդրումների վերաբերյալ	
Դրական	Բացասական
Սփյուռքի գործարար ներուժի գնահատում	
Իրատեսական	Ոչ իրատեսական
Ներդրումային միջավայր և բիզնեսի պայմաններ. գնահատական Հայաստանից	
Դրական	Բացասական
Ներդրումային միջավայր և բիզնեսի պայմաններ. գնահատական սփյուռքից	
Դրական	Բացասական
Սփյուռքահայ մասնագիտական խմբերի նախաձեռնություններ	
Բիզնես միջավայրի բարելավում	Առանց երկարաժամկետ նպատակի
Սփյուռքահայ գործարարների հարաբերությունները ՀՀ իշխանությունների հետ	
Դրական	Բացասական
Համահայկական գործարար համաժողովներ	
Բիզնես միջավայրի բարելավում	Առանց երկարաժամկետ նպատակի

Ընդհանուր առմամբ, սփյուռքի ներդրումների մասին հրապարակումների մեծ մասն ավելի շատ մտադրություն կամ հայտարարություն են, քան իրական գործունեություն: Սփյուռքի ուղղակի ներդրումների կարևորության մասին նյութերն առավելապես ներկայացնում են կոչեր կամ խնդրանք սփյուռքին՝ ներդրումներ կատարել հայրենիքում: Ներդրման մտադրություններ, կարծրատիպեր, կերպարի մասին պատկերացումներ ձևավորող ամենաազդեցիկ տեղեկատվությունը սփյուռքահայ ձեռնարկատերերի գործունեության առանձին դեպքերն են, որոնք, սակայն, ոչ միայն ամենաքիչն են ներկայացվում, այլև բևեռային են՝ հաջողված կամ ձախողված (չկան առկա խնդիրները հաղթահարած իրական դեպքերի պատմություններ):

ԶԼՄ հրապարակումների միջոցով, մի կողմից, մատնանշվում է սփյուռքի տնտեսական մեծ ներուժը և ցույց են տրվում Հայաստանի իշխանությունների ակնկալիքները՝ ներգրավելու այն երկրի տնտեսության մեջ, մյուս կողմից՝ ներդրումային միջավայրի և բիզնեսի պայմանների մասին հավաստիացումները վստահություն չեն ներշնչում սփյուռքի ներդրողների համար: Հայրենիքի զարգացմանը նպաստող ներդրումների ներգրավումն առավելապես ներկայացվում է էմոցիոնալ մոտիվների հիմնավորմամբ (ֆինանսական և սոցիալական մոտիվները կամ չեն դիտարկվում, կամ դիտարկվում են որպես երկրորդական): Սփյուռքի ներգրավման քաղաքականությունը ներկայացվում է միակողմանի՝ դեպի Հայաստան և մեկ գործոնով՝ ֆինանսական կապիտալով, ինչը սփյուռքահայերի մեջ կարող է առաջացնել անվստահություն: Սփյուռքահայերն, իրենց հերթին, առաջ են քաշում վստահության և երաշխիքների խնդիրներ (ընհանրապես, սփյուռքահայերի տեսակետներն անհամեմատ քիչ են ներկայացվում):

Այսպիսով, սփյուռքի ներդրումների և սփյուռքահայ գործարարների մասին ուսումնասիրված առցանց ԶԼՄ նյութերը ցույց են տալիս. ա) խիստ անհամաչափություն խնդրի կարևորության և դրա լուսաբանման ծավալների միջև, բ) մեդիան չի օգտագործվում որպես սփյուռքյան ներդրումների ներգրավման կարևոր գործիք, գ) հրապարակումները բովան-

դակային առումով չեն նպաստում սփյուռքահայերի գործարար նպատակադրումներին, դ) սփյուռքահայ գործարարի կերպարը ներկայացվում է առավելապես էմոցիոնալ, այսպես կոչված հայրենասիրական շարժառիթներով, ինչը ոչ իրական պատկերացում է ձևավորում, ե) չի ներկայացվում սփյուռքի ներդրումների վերաբերյալ իրատեսական գնահատական, ինչը կարող է այն ըստ արժանվույն չգնահատելու և չկարևորելու տպավորություն ստեղծել սփյուռքում:

21-ՐԴ ԴԱՐԸ՝ «ՔՐԴԱԿԱ՞Ն ԴԱՐ»

Հայկ Գաբրիելյան[*]

21-րդ դարում և մասնավորապես ընթացիկ տասնամյակում Իրաքի, Սիրիայի, ինչպես նաև Թուրքիայի քրդերը զգալի հաջողություններ են գրանցել տարատեսակ ոլորտներում: Ներկայացնենք վերջին տարիներին քրդերի ձեռքբերումները, որոնք կրում են շարունակական բնույթ:

Իրաքի քրդեր.– Վերջին շրջանում Իրաքի քրդերի զգալի հաջողությունների շարքը սկսում ենք ամենաթարմ օրինակով.

ա) **Անկախության հանրաքվե.**- 2017թ. սեպտեմբերի 25-ին Իրաքյան Քրդստանում անցկացվեց անկախության հանրաքվե: Քվեարկությանը մասնակցեց ավելի քան 3 միլիոն մարդ, որոնց ավելի քան 93%-ը կողմ արտահայտվեց անկախությանը: Նշենք, որ սա առաջին դեպքը չէ, որ Իրաքյան Քրդստանում անցկացվում է հանրաքվե. 2005թ. Իրաքյան Քրդստանում արդեն նմանատիպ կամարտահայտություն դրսևորվել է, որի մասնակիցների մոտ 98%-ը կողմ է քվեարկել անկախությանը: Սակայն ինչպես դիպուկ նկատել է Իրաքյան Քրդստանի ղեկավար Մասուդ Բարզանին, 2005թ. հանրաքվեն հայտարարել ու անցկացրել են հասարակական կազմակերպությունները, մինչդեռ 2017թ. հանրաքվեն կազմակերպել են կառավարությունն ու քաղաքական կուսակցությունները: Բացի այդ, տվյալ հանրաքվեն անցկացվել է ավելի փոքր տարածքում, քան այն, որն Իրաքի քրդերը վերահսկում են ներկայում: Անկախության մասին նոր հանրաքվե անցկացնելն Իրաքի քրդերի վերջին ձեռքբերումներից է՝ անկախ նրանից, թե ինչ շարունակություն կունենա այն ներկա փուլում: Կարելի է ենթադրել, որ ժամանակի ընթացքում միջազգային հանրությունը կհաշտվի Իրաքյան Քրդստանի դե-յուրե անկախության հետ՝ հաշվի առնելով նաև տարիներ շարունակ նրա դե-ֆակտո անկախ լինելը: 1991թ. Պարսից ծոցի պատերազմից հետո իրաքյան զորքերը լքեցին Իրաքյան Քրդս-

[*] Թուրքագետ, ՄԱՀՀԻ ասոցացված փորձագետ:

տանը, որը սկսեց գործել ինքնուրույն: Իսկ 2003թ., Սադամ Հուսեյնի վարչակարգի տապալումից երկու տարի անց, ընդունվեց Իրաքի նոր Սահմանադրությունը, որով Իրաքյան Քրդստանին տրվեց լայն ինքնավարության կարգավիճակ: Պատմական փորձը վկայում է, որ Իրաքի քրդերը կարողացել են օգտվել նման իրադարձություններից, մասնավորապես Պարսից ծոցի երկու պատերազմներից: Նույն պատկերին ականատես ենք լինում նաև ներկայում. 2014թ. Իրաքում ԻՊ սկսած հաղթարշավը նոր մարտահրավերներ, սակայն, դրան զուգահեռ, նաև լայն հնարավորություններ առաջացրեց Իրաքյան Քրդստանի համար, որն էլ ամեն կերպ օգտվում է դրանցից: Այդ մասին վկայում է նաև անկախության նոր հանրաքվե անցկացնելու հիմնավորումը (որ իրաքյան բանակը փախել է ԻՊ ճնշման ներքո, և Իրաքի քրդերն իրենք են զենքի միջոցով պաշտպանել իրենց):

բ) **Դիվանագիտական ճանաչում.**– Նշենք, որ ներկա դրությամբ Իրաքյան Քրդստանում հավատարմագրված է 35 օտար դիվանագիտական ներկայացուցչություն՝ գլխավոր հյուպատոսների մակարդակով, ինչպես նաև ինքնավարության տարածքում գործում են հարյուրավոր օտար ընկերություններ: Իսրայելն օգոստոսին վարչապետի մակարդակով կողմ արտահայտվեց քրդական անկախ պետության ստեղծմանը, սեպտեմբերի կեսին (հանրաքվեի անցկացումից օրեր առաջ) աջակցություն հայտնեց պետականություն ձեռք բերելուն ուղղված Իրաքյան Քրդստանի ջանքերին՝ դրանք որակելով օրինական: Ակնկալվում է, որ անկախ Իրաքյան Քրդստանը կդառնա Իսրայելի տարածաշրջանային դաշնակիցը, որի սուր կարիքն ունի Իսրայելը: Իսրայելը կփորձի Իրաքյան Քրդստանի միջոցով սահմանափակել առաջին հերթին Իրանի և Թուրքիայի ազդեցությունը տարածաշրջանում: Բացի այդ, Իսրայելի համար կարևորվում են Իրաքյան Քրդստանի նավթային և ջրային պաշարները[1]: Իսրայելի անվտանգության ապահովումը մեծ կարևորություն է ներկայացնում ԱՄՆ-ի համար, որն առերևույթ հանդես եկավ Իրաքյան Քրդստանի անկախության հանրաքվեի անցկացման դեմ, սակայն իրականում կարելի է ենթադրել, որ հենց նա է կանգնած եղել այդ հանրա-

[1] *Габриелян Айк*, Курдский вопрос между Турцией и Израилем, Институт Ближнего Востока, 16.09.2017.

քվեի անցկացման հետևում: Հակառակ պարագայում դժվար է հավատալ, որ Իրաքյան Քրդստանի ղեկավար Մասուդ Բարզանին կհամարձակվեր դեմ գնալ համայն աշխարհին և հանրաքվե անցկացներ: ԶԼՄ հաղորդմամբ՝ ԱՄՆ-ը արդեն զգուշացրել է Իրաքին, Թուրքիային և Իրանին, որ չի հանդուրժի նրանց ռազմական միջամտությունն Իրաքյան Քրդստանում և համապատասխան ռազմական քայլեր է ձեռնարկել: Սա ինքնին խոսուն փաստ է: Կարծում ենք, որ Իրաքյան Քրդստանի հարևան երկրները նույնպես ժամանակի ընթացքում կհաշտվեն տարածաշրջանի նոր իրողությունների հետ, ընդ որում՝ որքան շուտ նրանք անեն դա, այնքան շահեկան դիրքերում կհայտնվեն (նրանք որոշ ժամանակ կարող են պատժամիջոցներ սահմանել Իրաքյան Քրդստանի նկատմամբ, շրջափակման մեջ պահել այն, սակայն հազիվ թե դա կպահպանվի երկար): Օրինակ, եթե Իրանն առաջ անցնի Թուրքիայից, ավելի շուտ որոշ հետքայլ անի, ավելի շուտ մեղմի Իրաքյան Քրդստանի հանդեպ կոշտ դիրքորոշումը, ապա վերջինիս նավթը միջազգային շուկաներ կարող է դուրս գալ հենց Իրանի և ոչ թե Թուրքիայի տարածքով: Ընդ որում՝ խնդիրը միայն նավթը չէ, նույնը կարելի է ասել այդ երկրների կողմից Իրաքյան Քրդստանի շուկայի համար պայքարելու վերաբերյալ և այլն[2]:

գ) **Տարածքային ձեռքբերումներ.**- 2014թ. Իրաքում ԻՊ հաղթարշավի մեկնարկից հետո իրաքյան զորքերը հեռացան երկրի հյուսիսային մի շարք շրջաններից, այդ թվում նաև նավթառատ Քիրքուքից, և առաջացած վակուումը չհապաղեց լցնել Իրաքյան Քրդստանը: Ընդհանուր առմամբ վերջին երեք տարիներին «վիճելի տարածքների հաշվին» զգալիորեն ընդլայնվել է Իրաքյան Քրդստանի վերահսկողության տակ գտնվող տարածքը: Եթե ԻՊ հաղթարշավից առաջ Իրաքյան Քրդստանի տարածքը կազմում էր 41 հազ. կմ^2, ապա իրաքյան բանակի նահանջի և ԻՊ-ի դեմ Փեշմերգայի մարտերի արդյունքում այդ ցուցանիշն աճել է 30 հազ. կմ^2-ով՝ կազմելով 71 հազ. կմ^2: Չնայած դրան՝ Իրաքյան Քրդստանը հավակնում է մինչև 78 հազ. կմ^2 տարածքի[3]: Եվ թեև Իրաքյան Քրդստանի տարածքային

[2] *Габриелян Айк,* Референдум в Иракском Курдистане: перспективы и вызовы для Турции, Институт Ближнего Востока, 04.10.2017.

[3] Irak Kürt Yönetimi Topraklarını 30 Bin Kilometrekare Daha Genişletti, Haberler.com, 18.03.2016.

այս ձեռքբերումները վերջնական չեն, ամրագրված չեն դե-յուրե, այնուամենայնիվ, անկախության հանրաքվեի անցկացումը նաև այդ տարածքներում խոսուն փաստ է և վկայում է դրանց հանդեպ Իրաքյան Քրդստանի ղեկավարության լուրջ հավակնությունների մասին: Իրաքյան Քրդստանին ծանր պայքար է սպասվում այդ հարցում՝ հաշվի առնելով պաշտոնական Բաղդադի և հատկապես Թուրքիայի հակազդեցությունը գլխավորապես Քիրքուքի հարցում, որը նա համարում է «թուրքմենական քաղաք»[4] և փորձելու է ամեն կերպ շահարկել Իրաքի թուրքմենների հարցն ընդդեմ Իրաքյան Քրդստանի (քրդերի):

դ) Ռազմական հաջողություններ.– Արդեն նշվեց, որ Փեշմերգան (ԱՄՆ գլխավորած միջազգային դաշինքի աջակցությամբ) հաջող մարտեր է մղել ԻՊ-ի դեմ, որոնք էլ հնարավոր են դարձրել վերոնշյալ տարածքային ձեռքբերումները: Ընդգծենք, որ այդ մարտերում Փեշմերգան թրծվել է, ձեռք է բերել մարտական լուրջ փորձ, վերածվել առավել ազդեցիկ մարտունակ ուժի: Դրան նպաստել են նաև օտար երկրների կողմից Փեշմերգայի հազարավոր մարտիկների համար ռազմական ուսուցման կազմակերպումն ու արտերկրից (հիմնականում ԱՄՆ-ից, Գերմանիայից, Ֆրանսիայից) Փեշմերգայի համար սպառազինության զգալի մատակարարումները: Այս ամենին զուգահեռ՝ աճել է Փեշմերգայի մարտիկների թիվը. տարբեր տվյալներով՝ այժմ նրանց թիվը տատանվում է 114 հազ.-300 հազ.-ի միջև[5]: Ի դեպ, ընդունված է համարել, որ *PKK* զինյալների թիվը սովորաբար կազմում է 3000-5000, որի դեմ Թուրքիան զինված պայքար է մղում ավելի քան 30 տարի: Եվ Թուրքիան որքան խստացնի Իրաքյան Քրդստանի հանդեպ դիրքորոշումը, այնքան շատ կհամընկնեն Փեշմերգայի ու *PKK* շահերը, և արդյունքում՝ Թուրքիայում էլ ավելի կսրվի *PKK* զինված պայքարը, Փեշմերգան կաջակցի *PKK*-ին (վերջին շրջանում լուրջ տարաձայնություններ կան Իրաքյան Քրդստանի իշխանությունների և *PKK* ղեկավարության միջև, հատկապես կապված *PKK*-ի կողմից «Քիրքուք-Յումուրթալըք» (Ջեյհան) նավթամուղի պայթեցումների հետ):

[4] *Габриелян Айк*, Курдский вопрос в турецко-иракских отношениях, Институт Ближнего Востока, 12.06.2017.

[5] Kürdistan Bölgesi'ndeki Peşmerge sayısı Kaynak: Kürdistan Bölgesi'ndeki Peşmerge sayısı, Haber Azad, 05.04.2017.

Սիրիայի քրդեր.– Վերջին տարիներին Սիրիայի քրդերը նույնպես ունեցել են ծանրակշիռ հաջողություններ, որոնք առնչվում են տարբեր ոլորտների:

ա) Դե-ֆակտո ինքնավարություն.– 2011թ. մեկնարկած Սիրիական ճգնաժամը թե՛ մարտահրավերներ, թե՛ հնարավորություններ առաջացրեց Սիրիայի քրդերի համար: Վերջիններս սկզբնական շրջանում խելամտորեն պահպանեցին չեզոքություն, և երբ 2012թ. երկրի նախագահ Բաշար Ասադը Հալեպի ճակատամարտի համար իր զորքերը հետ քաշեց Թուրքիային սահմանակից շրջաններից (Սիրիական Քրդստան), Սիրիայի քրդերը սկսեցին վերահսկողություն հաստատել տարածաշրջանի քաղաքների վրա: 2013թ. նոյեմբերին Սիրիայի քրդերի «Դեմոկրատական միություն» (խոշորագույն) կուսակցությունը (*PYD*) առաջարկեց տարածաշրջանը բաժանել երեք մասի: Արդեն 2014թ. հունվարին *PYD* նախաձեռնությամբ Սիրիայի հյուսիս-արևելքում հռչակվեց երեք ինքնավար շրջան՝ Ջիզրե, Քոբանի և Աֆրին: Եվ չնայած Սիրիայի քրդերն անմիջապես ընդգծեցին, որ այդ երեք շրջանները Սիրիայի մի մասն են, իրականում դա լուրջ քայլ էր Սիրիայի հյուսիսում քրդական ինքնավարություն ստեղծելու ճանապարհին: Դրանից ամիսներ անց մեկնարկեց Սիրիայի քրդերի վրա ԻՊ հարձակումը, որին նրանք դիմագրավեցին մեծ դժվարությամբ, այդ թվում նաև ԱՄՆ և Փեշմերգայի աջակցությամբ: 2015թ. սկսվեց Սիրիայի քրդերի վերելքը, այդ թվում նաև ռազմական հաջողությունների տեսքով, ինչին նպաստեց այն, որ ԻՊ-ի դեմ ակտիվ զինված պայքարի մեջ մտնելու հարցում Թուրքիայի ներկայացրած նախապայմաններից հիասթափված ԱՄՆ-ը սկսեց ավելի շատ հենվել Սիրիայի քրդերի վրա՝ նրանց դիտարկելով որպես ցամաքում ԻՊ-ի դեմ պայքարի հիմնական ուժ: Այդ ամենը հանգեցրեց նրան, որ Սիրիայի քրդերն ունեցան տարածքային լուրջ ձեռքբերումներ և հնարավոր դարձրեց 2016թ. մարտին Սիրիայի քրդերի կողմից երկրի հյուսիսում տարածաշրջանային դաշնային վարչակարգ՝ «Հյուսիսային Սիրիայի Դաշնություն» ստեղծելու մասին պաշտոնապես հայտարարելը: Նույն տարվա վերջին Սիրիայի քրդերը հավանության արժանացրին դաշնային այդ շրջանի սահմանադրությու-

նը[6]: Այսպիսով, Սիրիայի քրդերն արդեն ունեն դե-ֆակտո ինքնավարություն, որը դեռ կփորձեն վերածել դե-յուրե ինքնավարության: Այդ համատեքստում Սիրիայի քրդերին ծանր պայքար է սպասվում:

բ) Տարածքային ձեռքբերումներ.– Սիրիական ճգնաժամը, ԻՊ-ի դեմ Սիրիայի քրդերի հաջող մարտերը հանգեցրին նրան, որ ներկա դրությամբ Սիրիայի քրդերը վերահսկում են Սիրիայի տարածքի 23%-ը (Ասադի զորքերը վերահսկում են երկրի տարածքի 46%-ը): Ընդ որում՝ վերջին հինգ ամիսներին այդ ցուցանիշն աճել է 2%-ով (ավելի վաղ Սիրիայի քրդերը վերահսկում էին երկրի տարածքի 21%-ը՝ 38.500 կմ^2)[7] և շարունակում է աճել ԻՊ-ի վերահսկած տարածքների ազատագրման հաշվին: Սիրիայի քրդերն արդեն վերահսկում են Թուրքիային սահմանակից Սիրիայի շրջանների 65%-ը: Ուշագրավ է, որ Սիրիայի քրդերը վերահսկում են Թուրքիայի և Սիրիայի միջև սահմանի 500-550 կմ-անոց հատվածը (հայտնի է, որ Թուրքիան ամենաերկար ցամաքային սահմանն ունի հենց Սիրիայի հետ՝ 911 կմ): Եվ եթե չլիներ Թուրքիայի ձեռնարկած «Եփրատի վահան» ռազմական գործողությունը, Սիրիայի քրդերը կմիավորեին իրենց 3 ինքնավար շրջանները, որով նրանց կողմից թուրք-սիրիական սահմանի վերահսկվող հատվածի երկարությունը կավելանար ևս 100 կմ-ով (Ազեզ-Ջերաբլուս գոտի): Դրանով Սիրիայի քրդերը կվերածվեին Թուրքիայի հետ ամենաերկար ցամաքային սահմանն ունեցող ուժի (Թուրքիայի հետ երկրորդ ամենաերկար ցամաքային սահմանն ունի Իրանը՝ 560 կմ): Սիրիայի քրդերի այս տարածքային ձեռքբերումները կարևոր են նաև այն առումով, որ Սիրիական Քրդստանը (Ռոժավա) արևելքում սահմանակից է Իրաքյան Քրդստանին, որով փաստորեն Թուրքիան իր հարավային սահմաններին ստանում է մոտ 900 կմ-անոց «քրդական միջանցք» («քրդական պատնեշ»): Ներկա դրությամբ Իրաքի և Սիրիայի քրդերը վերահսկում են ավելի քան 110 հազ. կմ^2 տարածք: Ընդ որում՝ հետագայում կարող են ավելի սերտանալ Սիրիական Քրդստանի և Իրաքյան Քրդստանի միջև հարաբերությունները, մի կողմ դրվեն տարաձայնությունները՝ կախված նրանց երկուսի հանդեպ Թուրքիայի կոշտ հակաքայլերից:

[6] *Габриелян Айк*, Усиление позиций сирийских курдов и интересы Турции, Институт Ближнего Востока, 07.04.2017.

[7] Suriye'nin yüzde 61'i iki terör örgütünün işgalinde, Anadolu Ajansı, 31.03.2017.

գ) Ռազմական հաջողություններ.– Վերջին շրջանում Սիրիայի քրդերի ինքնապաշտպանական ջոկատները՝ *YPG/YPJ*-ը, վերածվել են կազմակերպված լուրջ ուժի, նրանց հետ աշխատում են ամերիկացի ռազմական հրահանգիչները, մեծ փորձառություն են ձեռք բերել ԻՊ-ի դեմ մարտերում: 2016թ. վերջի դրությամբ *YPG/YPJ* մարտիկների թիվն արդեն հասել է 60 հազ.-ի: Չնայած դրան՝ Սիրիայի քրդերը նպատակադրվել էին *YPG/YPJ* մարտիկների թիվը մեծացնել 2/3-ով՝ այդ թիվը հասցնելով 100 հազ.-ի[8]: Այս ամենի հետ մեկտեղ, ԱՄՆ-ը Դոնալդ Թրամփի նախագահության ժամանակ սկսել է սպառազինություն մատակարարել YPG/YPJ-ին, ինչը հարուցել է Թուրքիայի դժգոհությունը՝ չնայած ԱՄՆ-ը խոստացել է Թուրքիային ներկայացնել *YPG/YPJ*-ին տրամադրած սպառազինության ցուցակը և ԻՊ-ի դեմ հաղթանակից (Ռաքքայի ազատագրումից) հետո Սիրիայի քրդերից հետ վերցնել այդ զենքերը: Թուրքիայի իշխանությունները գիտակցում են, որ ԱՄՆ-ը կարող է ձգձգել զենքերի վերադարձման գործընթացը (եթե դա ընդհանրապես տեղի ունենա), և որ իրենք ունակ չեն ամբողջովին վերահսկել տվյալ գործընթացը (Թուրքիայում կասկածներ ունեն, որ *YPG/YPJ*-ն ԱՄՆ տրամադրած զենքերի մի մասն արդեն հատկացրել է *PKK*-ին, որը կարող է թաքցրած լինել դրա մի մասը և Թուրքիայի դեմ կիրառել մի քանի տարի անց): Բացի այդ, թուրքական կողմը գիտակցում է, որ թեպետ *YPG/YPJ*-ին ամերիկյան զենքի մատակարարումները վնասաբեր են իր համար, սակայն էլ ավելի վատթար է այն, որ Սիրիայի քրդերը նաև այդ զենքի մատակարարումների շնորհիվ ունենում են տարածքային ձեռքբերումներ, ամրապնդում իրենց դիրքերը երկրում և տարածաշրջանում՝ վերածվելով դերակատարի, նաև լծակի գերտերությունների և այլ ուժերի համար[9]:

Թուրքիայի քրդեր.– Թուրքիայի քրդերի հաջողություններն Իրաքի և Սիրիայի քրդերի վերոնշյալ հաջողությունների համեմատ թեև ավելի համեստ են, սակայն դրանք կան և արժանի են հիշատակման:

[8] YPG ‘örgütlü bir güç’ olma hedefinde: Militan sayısı 100 bine çıkarılacak, Diken, 21.03.2017.

[9] *Габриелян Айк*, Турецко-американские разногласия по курдскому вопросу, Институт Ближнего Востока, 30.06.2017.

ա) Ընտրական հաջողություններ.– 2015թ. հունիսի 7-ին Թուրքիայում անցկացվեցին խորհրդարանական ընտրություններ, որոնց արդյունքներով քրդամետ «Ժողովուրդների դեմոկրատիա» կուսակցությունը (ԺԴԿ) Թուրքիայի Հանրապետության (ԹՀ) պատմության մեջ առաջին անգամ հաղթահարեց 10%-անոց ընտրաշեմը և 550 հոգանոց խորհրդարանում ստացավ 80 մանդատ: ԺԴԿ հաջողությունը հնարավոր դարձավ կուսակցության ներկայացուցիչների կազմակերպվածության, ընտրած մարտավարության շնորհիվ. սկզբից ևեթ հայտարարվել էր, որ ԺԴԿ-ն չպետք է սահմանափակվի Թուրքիայի միայն հարավարևելյան նահանգներում գործունեություն ծավալելով: Ընտրությունների արդյունքները վկայեցին, որ ԺԴԿ-ին հաջողվել է դա, և այն (մասնակի) վերածվել է ողջ Թուրքիայի մասշտաբով կուսակցության (թեև ԺԴԿ-ն մանդատներ ստացել է 81 նահանգից 27-ում): Թեև համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցելու մասին ԺԴԿ ղեկավարության որոշումը որոշակի առումով ռիսկային որոշում էր, այնուամենայնիվ, ԺԴԿ-ն գնաց դրան, քանի որ դրա շնորհիվ հնարավորություն էր ստանում հաջողության դեպքում ավելի շատ ներկայացված լինել երկրի խորհրդարանում, քան անկախ թեկնածուներով հանդես գալու դեպքում: Ի դեպ, երկրի արևելյան և հարավարևելյան 14 նահանգում, ուր հաղթել է ԺԴԿ-ն, 58 մանդատից 49-ը բաժին է ընկել հենց նրան, իսկ մնացած 9-ը՝ իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցությանը (ԱԶԿ): Դա հանգեցրեց նրան, որ թեև ԱԶԿ-ն 4-րդ անգամ անընդմեջ հաղթեց Թուրքիայի խորհրդարանական ընտրություններում, սակայն առաջին անգամ ստացավ 276-ից պակաս (258) մանդատ և ի վիճակի չեղավ ձևավորել միակուսակցական կառավարություն[10]: Այդ պատճառով էլ Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը, որը սկզբում, ըստ ամենայնի, թերագնահատել էր ԺԴԿ-ին, չներեց նրան և որոշեց գլխատել այն. կալանքի տակ վերցվեց ԺԴԿ ղեկավարությունը: Բացի այդ, 2015թ. ամռանը Թուրքիայում վերսկսվեցին *PKK*-ի դեմ ռազմական գործողությունները, որոնք ծանր դրության մեջ դրեցին քրդամետ կուսակցությունը, իսկ ԺԴԿ նախընտրական

[10] *Հայկ Գաբրիելյան*, 2015թ. խորհրդարանական ընտրությունները Թուրքիայում, «Նորավանք» ԳԿՀ, 14.07.2015:

նոր հանդիպումների ժամանակ հաճախակիացած պայթյունները կուսակցությանը խանգարեցին անցկացնելու լավ ընտրարշավ: Արդյունքում՝ ԺԴԿ-ն 2015թ. նոյեմբերի 1-ի խորհրդարանական կրկնական ընտրություններում զգալի նահանջ ապրեց. խորհրդարանում նրա մանդատների թիվը նվազեց 21-ով՝ 80-ից մինչև 59-ի: Եվ այնուամենայնիվ, ԺԴԿ-ն երկրորդ անգամ անընդմեջ հաղթահարեց 10%-անոց ընտրաշեմը, որն ամենաբարձրն է ԵՄ անդամ երկրների թվում և շատերի պնդմամբ՝ սահմանվել է նրա համար, որպեսզի քրդական կուսակցությունները չկարողանան հայտնվել խորհրդարանում[11]: Փաստորեն, Թուրքիայի քրդերին հաջողվեց կոտրել «ընտրական պատնեշը», ինչը կարող է ստանալ շարունակական բնույթ հետագայում: Դրան կարող է նպաստել Թուրքիայի քրդերի թվաքանակի աճը:

բ) Ժողովրդագրական հաջողություններ.– Թուրքիայի բնակչության թիվը հասել է 80 մլն-ի: Այդ ցուցանիշով Թուրքիան աշխարհում զբաղեցնում է 18-րդ տեղը՝ մի փոքր զիջելով Իրանին, որն իր տարածքով ավելի քան կրկնակի գերազանցում է Թուրքիային: Ի դեպ, Թուրքիայի բնակչությունը վերջին տարիներին կանոնավորապես աճում է մոտ 1 մլն-ով: Բացի այդ, 2015թ. ՄԱԿ Սոցիալական հարցերով հիմնադրամը կանխատեսել է, որ 2030թ. Թուրքիայի բնակչության թիվը կհասնի 87.7 մլն-ի, իսկ 2050թ.՝ 95.8 մլն-ի: Եվ վերջապես, չպետք է մոռանալ, որ թուրքական իշխանությունները շարունակ թմբկահարում են, որ եթե ԵՄ-ը Թուրքիան ընդունի իր շարքերը, ապա կստանա երիտասարդ ու աշխատասեր բնակչություն: Հաշվի առնելով այս իրողությունները՝ առաջին հայացքից կարող են տարօրինակ թվալ Թուրքիայի իշխանությունների հետևյալ մի շարք հայտարարություններն ու նախաձեռնությունները: Օրինակ, Թուրքիայի նախկին վարչապետներից Ահմեթ Դավութօղլուն ժամանակին հայտարարել է, որ «կանայք պետք է երեխաներ ունենալուն վերաբերվեն ինչպես հայրենիքի առջև ունեցած պարտքի, որը կարելի է համեմատել բանակում ծառայելու հետ»: Էրդողանն իր վարչապետության վերջում և նախագահության տարիներին քանիցս յուրաքանչյուր նորաստեղծ ըն-

[11] *Հայկ Գաբրիելյան*, 2015թ. նոյեմբերի 1-ի ընտրությունները Թուրքիայում, «Նորավանք» ԳԿՀ, 07.12.2015:

տանիքից պահանջել է ունենալ առնվազն 3 երեխա՝ ընդգծելով, որ կանանց կյանքն առանց սերունդ տալու լիարժեք չէ: Էրդողանը նաև ցանկանում էր օրենսդրորեն արգելել հղիության արհեստական ընդհատումները, սակայն ձախողվեց, քանի որ դա առաջացրեց հասարակական լուրջ դժգոհություն, և դրա հետ մեկտեղ՝ փորձագետները համապատասխան խորհուրդ տվեցին Էրդողանին՝ ընդգծելով, որ անգամ արգելքի դեպքում այդ երևույթը չի դադարի և կշարունակվի ավելի հակասանիտարական պայմաններում: Այս ամենին հավելենք, որ Էրդողանը հակաբեղմնավորիչներ օգտագործելը որակել է «հայրենիքի դավաճանություն»: Մեկնաբանելով Թուրքիայի իշխանությունների այս պահվածքը՝ նշենք, որ իրականում նրանց չափազանց մտահոգում է քուրդ բնակչության շրջանում ծնելիության բարձր տեմպերը, որոնք 2-3 անգամ գերազանցում են թուրքերի ծնելիության տեմպերը, այդ հարցը պարբերաբար տեղ է գտնում Թուրքիայի Ազգային անվտանգության խորհրդի նիստերում: Ժամանակին անգամ քուրդ առաջնորդ Աբդուլա Օջալանը չի բացառել, որ կգա ժամանակ, երբ քրդերը Թուրքիայում կկազմեն մեծամասնություն: Ելնելով այս ամենից՝ կարծում ենք, որ առնվազն երեք երեխա ունենալու մասին Թուրքիայի իշխանությունների կոչերի իրական հասցեատերը միայն թուրք բնակչությունն է[12]: Այս համատեքստում հիշատակության արժանի է նաև 2017թ. հուլիսի կեսին նախորդ տարվա ռազմական հեղաշրջման փորձի մեկամյակի կապակցությամբ Էրդողանի արած հետևյալ հայտարարությունը. «2016թ. հուլիսի 15-ի գիշերը մենք հողին հանձնեցինք 250 հերոսի, փոխարենն այդ գիշեր փրկեցինք 50 մլն-անոց Թուրքիայի ապագան»[13]: Էրդողանի այս խոսքերը տարատեսակ քննարկումներ առաջացրին Թուրքիայում, թե ինչու է նա անտեսում 30 մլն մարդու, և թե ովքեր են նրա հիշատակած 50 մլն անձինք: Խոսակցություններ ծավալվեցին, որ անտեսված 30 մլն-ը քրդերն ու ալևիներն են: Դրանից հետո ԱԶԿ-ն հարկադրված էր պարզաբանել Էրդողանի խոսքերը՝ ընդգծելով, որ «նախագահն իր 80 միլիոն քաղաքացիների կողքին է»[14]: Կանխատեսվում է, որ

[12] *Габриелян Айк*, Отношения Турции с турецкой диаспорой в Европе, Институт Ближнего Востока, 24.03.2017.
[13] Erdoğan: 50 milyonluk Türkiye'nin istikbalini kurtardık, Cumhuriyet, 15.07.2015.
[14] AK Parti'den '50 milyon' açıklaması, CNN Türk, 17.07.2017.

քրդերի շրջանում ծնելիության բարձր տեմպերի պահպանման, ֆորսմաժորի բացակայության դեպքում Թուրքիայում թուրք և քուրդ բնակչության թիվը կհավասարվի 2035թ.: Երկրի քրդերի ստույգ թվաքանակին տիրապետող և այն գաղտնի պահող Թուրքիայի իշխանությունները, բնականաբար, միջոցներ են ձեռնարկում և դեռ կձեռնարկեն դրա դեմ, որպեսզի Թուրքիայում թուրքերը չդառնան փոքրամասնություն: Չենք բացառում, որ եթե հետագայում իրավիճակը Թուրքիայի իշխանությունների համար դառնա սպառնալից, ապա նրանք կարող են համաձայնվել անգամ «Թուրքական Քրդստանի» անկախությանը՝ դրանով իսկ ձերբազատվելով քրդական բնակչության ստվար հատվածից (81 նահանգից մի քանիսը տալու շնորհիվ փրկելով երկրի մեծ մասը):

գ) Ռազմական հաջողություններ.– Թեև *PKK* շարքերում ընդգրկված չեն միայն Թուրքիայի քրդերը, այնուամենայնիվ, քանի որ *PKK* ակտիվ զինված պայքարը հիմնականում մղվում է Թուրքիայի տարածքում, խնդրին որոշել ենք անդրադառնալ այս ենթաբաժնում: Նշենք, որ ընթացիկ տասնամյակում *PKK* հարվածները նորանոր սպառազինությունների շնորհիվ դառնում են ավելի մահաբեր. այն արդեն ունի հակաօդային և հակատանկային հրթիռներ, որոնցով վերջին շրջանում խոցում է Թուրքիայի զինված ուժերի ոչ միայն մարտական ուղղաթիռներ, այլև տանկեր ու ինքնաթիռներ: Թուրքական մամուլում շատանում են տեղեկություններն այն մասին, որ *PKK* թաքստոցներում հայտնաբերվում են նորանոր և ժամանակակից զինատեսակներ, ինչպես նաև պայթուցիկների խոշոր խմբաքանակ: Թուրքական հետախուզությունը մտավախություն ունի, որ *PKK* զինյալները կարող են կիրառել ռումբերով բեռնված անօդաչու թռչող սարքեր (ԱԹՍ), ինչի մասին վկայել է Թուրքիայի հարավ-արևելքում ռազմական գործողությունների ժամանակ *PKK* թաքստոցներում մի շարք ԱԹՍ-ների հայտնաբերումը: Վերջին շրջանում *PKK*-ն սկսել է լայնորեն կիրառել ԱԹՍ-ներ, ընդ որում՝ խոսքը միայն օդային դիտարկում իրականացնելու մասին չէ. քուրդ զինյալները կարող են նաև դրանց վրա ռումբեր տեղակայել և դրանք օգտագործել անվտանգության ուժերի դեմ (տեսախցիկներով այդ ԱԹՍ-ները կարող են կառավարվել 200-300 մետ-

րից և կրել 500-1000 կգ պայթուցիկ նյութ)։ Այսպիսով, ժամանակակից զենքերն ու տեխնոլոգիաները մի կողմից՝ Թուրքիայի անվտանգության ուժերին օգնում են ավելի հաջող պայքարել *PKK*-ի դեմ, սակայն մյուս կողմից՝ *PKK*-ին հնարավորություն են տալիս հասցնել առավել մահաբեր հարվածներ։ Դա մեծացնում է անվտանգության ուժերի կորուստներն ու հասարակական դժգոհությունը, Թուրքիայի տնտեսական վնասները, այդ թվում նաև տարանցիկ կարևոր նախագծերի ապագան սպառնալիքի տակ դնելու տեսքով։ Կարելի է ասել, որ նոր զենքերի ստացման ու դրանցով մահաբեր հարվածներ հասցնելու շնորհիվ *PKK* զինված պայքարը Թուրքիայում թևակոխում է նոր փուլ։ Ի դեպ, *PKK*-ն Թուրքիայի տարածքի վրա հարձակումներ գործելու համար այսուհետ կարող է օգտվել ոչ միայն Հյուսիսային Իրաքի, միգուցե նաև՝ Հյուսիսային Սիրիայի տարածքից։ Ինչպես 2012թ. փետրվարին նկատել է Իրաքի նախագահ Ջելալ Թալաբանիի որդին՝ Իրաքյան Քրդստանի վաշինգտոնյան ներկայացուցիչ Քուբադ Թալաբանին, Թուրքիայում գտնվում է 1 մլն *PKK*-ական, և անգամ Սադամ Հուսեյնին չհաջողվեց ռազմական գործողությունների միջոցով ծնկի բերել Ղանդիլում բազավորվածներին[15]։

Ամփոփում. Վերոնշյալը վկայում է, որ Իրաքի, Սիրիայի և Թուրքիայի քրդերն ընթացիկ տասնամյակում հասել են լուրջ հաջողությունների։ Կարելի է ենթադրել, որ դա միայն սկիզբն է, և որ քրդերին դեռ սպասվում են նորանոր հաջողություններ և, բնականաբար, դրա հետ մեկտեղ նաև ծանր պայքար։ Ընդ որում՝ քրդերի հիմնական խոցելի տեղը նրանց միասնական չլինելն է, ինչն առնչվում է ոչ միայն տարբեր երկրներում (Իրաք, Սիրիա, Թուրքիա, Իրան) ապրող քրդերի միջև հարաբերություններին, այլև մեկ երկրում (Թուրքիա) ապրող քրդերի փոխհարաբերություններին։ Բացի այդ, քրդերը կարիք ունեն համեմատաբար երիտասարդ և խարիզմատիկ առաջնորդի։ Չենք բացառում, որ այդ երկու հիմնական և մի շարք այլ խնդիրների լուծման դեպքում մոտ 40 մլն քրդերը կկարողանան ստեղծել իրենց պետությունը տարածաշրջանում։ Արդյունքում՝ 21-րդ դարը կարող է դառնալ «Քրդական դար», թեև Թուրքիայի

[15] *Հայկ Գաբրիելյան*, Թուրքիայում *PKK*-ի դեմ պայքարի արդի փուլը, ՌԱՀՀԿ, «Փոփոխվող աշխարհ», 2017/2(9)։

8-րդ նախագահ (1989-1993թթ.) Թուրգութ Օզալը ժամանակին կանխատեսել էր, որ 21-րդ դարը կդառնա «Թուրքական դար»: Ներկայում թեպետ դեռ դրված չէ «Մեծ Քրդստանի» ստեղծման հարցը, և օրակարգում միայն Իրաքի հյուսիսում քրդական անկախ պետության ստեղծումն է, ամեն դեպքում՝ ժամանակի ընթացքում օրակարգում կարող է հայտնվել նաև «Մեծ Քրդստանի» ստեղծման հարցը: Թեև Էրդողանը ժխտում է Թուրքիայում «Քրդական հարցի» առկայությունը և խոստացել է թույլ չտալ քրդական պետության ստեղծում (այդ թվում նաև հարևան երկրներում), սակայն հնարավոր է՝ այն կստեղծվի հենց Էրդողանի նախագահության ժամանակ, որը տեսականորեն Թուրքիայի նախագահի պաշտոնում կարող է մնալ մինչև 2033-2034թթ.: Դա կատարյալ ֆիասկո կլինի Էրդողանի համար, որն ամեն կերպ ձգտում է ստվերել ԹՀ հիմնադիր Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքին և երկրի պատմության մեջ իր թողած հետքով գերազանցել նրան: Փոխարենը նա կարող է ԹՀ պատմության մեջ մտնել որպես քրդական պետության ստեղծումը կանխել չկարողացած նախագահ:

ԲՐԵԹՈՆ-ՎՈՒԴՍՅԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Իշխան Սոխակյան[*]

1944թ. Բրեթոն-Վուդսում տեղի ունեցած խորհրդաժողովը կոչված էր նվազեցնելու սակագները և միջազգային առևտրի այլ խոչընդոտները, ստեղծելու գլոբալ տնտեսական կառույց (*framework*)՝ պետությունների միջև տնտեսական հակամարտությունները նվազագույնի հասցնելու նպատակով: Խորհրդաժողովի արդյունքում ստեղծվեցին Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը (ՎԶՄԲ) և Արժույթի միջազգային հիմնադրամը (ԱՄՀ): ՎԶՄԲ-ն հետագայում անվանափոխվեց մեզ ծանոթ Համաշխարհային բանկի:

Ե.Ֆ. Ավդոկուշինը գտնում է, որ Բրեթոն-վուդսյան համաձայնագիրը միջազգային արժութային համակարգի զարգացման կարևորագույն փուլն է, որը փոխեց համակարգի ողջ կառուցվածքը:

Ներկայիս տնտեսագետների գնահատումների ընդհանուր առանցքն այն է, որ այս համակարգը *ամերիկացենտրիզմի* վառ դրսևորումներից մեկն է:

Վ.Ֆ. Կոլոմիյցևը նշում է, որ դոլարը դարձավ մի շարք երկրների ֆինանսական շահագործման գործիք: Գ.Շմիլդը, ուսումնասիրելով հետպատերազմյան տարիների ամերիկյան զարգացման հեռանկարները, եկել է այն եզրահանգմանը, որ ԱՄՆ ներկայացուցիչները՝ Հենրի Մորգենթաուն, Հարի Դեքստեր Ուայթը, ցանկանում էին դոլարին վերագրել դոմինանատ դեր արժույթի համակարգում:

Միջազգային արժույթի զարգացման փուլերը

Միջազգային արժույթն անցել է զարգացման հետևյալ փուլերը.

1. «Ոսկու ստանդարտ»
2. Բրեթոն-վուդսյան համակարգ
3. Ցամահյան կամ արժույթի զարգացման ժամանակակից փուլ:

[*] ՌԴ ԳԱԱ Վ.Ա. Ստեկլովի անվան մաթեմատիկական ինստիտուտի դոկտորանտ, տ.գ.թ.:

«Ոսկու ստանդարտ»

«Ոսկու ստանդարտ» հասկացությունը, ինչպես նաև համակարգը, ծագել է 19-րդ դարում: Դա պայմանավորված էր Հյուսիսային Ամերիկայի և Եվրոպայի միջև ապրանքաշրջանառության կանոնակարգման անհրաժեշտությամբ: Համակարգը գոյատևել է մինչ 1914թ. և ուներ հետևյալ առանձնահատկությունները.

- Երկրի արժութային համակարգն ուներ ոսկուն փոխկապակցված արժեք
- Ցանկացած անձ, ըստ ցանկության, կարող էր փոխանակել արժույթ հանդիսացող միավորը ոսկու հետ
- Հնարավորություն էր ստեղծված օգտագործել ոսկյա մետաղադրամներ, որոնք կարող էին հանդես գալ որպես փոխանակման և գնման միջոց ազգային արժույթի հետ համատեղ:

Առաջին համաշխարհային պատերազմը ապակայունացրեց այս համակարգը, քանզի պատերազմի ծախսերը փակելու համար պետությունները ստիպված էին վերցնել խոշոր վարկեր, որը էական խոչընդոտ էր հետագա զարգացմանը:

Բրեթոն-վուդսյան համակարգը

1944թ. ԱՄՆ նախաձեռնությամբ տեղի ունեցավ Բրեթոն-վուդսյան խորհրդաժողովը, որին մասնակցում էր 44 երկիր, այդ թվում ԱՄՆ-ը, ԽՍՀՄ-ը, Անգլիան և այլն: Բրեթոն-վուդսյան համակարգի հիմքը *միջազգային համաձայնագիրն* էր՝ պրակտիկ առաջին կիրառումը որպես ֆինանսական համակարգի հիմք:

Խորհրդաժողովում մշակվեցին միջազգային արժութային համակարգի կոնցեպտը և համակարգային կառուցվածքի տարրերը.

- Արժույթի համակարգի կայունություն
- Արժույթի փոխակերպելիություն (կոնվերտացիա):

Բրեթոն-Վուդսը ամրապնդեց դոլարի դերը որպես միջազգային արժույթ, իսկ այլ երկրների արժույթի փոխարժեքները կապեց դոլարի հետ և

«ամրագրեց» դրանց արժեքները՝ ֆիքսելով դրանց փոխարժեքը: Չէր թույլատրվում արժույթների փոխարժեքի շեղում նշանակված շեմից առավել քան +/- 1%: Նշված սահմանը հատելու դեպքում տվյալ երկիրը՝ իր ռեզերվների միջոցով, պետք է միջազգային հարթակում գներ իր իսկ արժույթը դոլարով՝ առաջացնելով ազգային արժույթի դեֆիցիտ և, որպես հետևանք՝ ազգային արժույթի արժեքի դրույքի բարձրացում: Այս քաղաքականությունը ստացավ «Արժույթի ինտերվենցիա» անվանումը:

Բրեթոն-վուդսյան համակարգն ավարտվեց 70-ական թթ., երբ 1971թ. օգոստոսի 15-ին ԱՄՆ-ը, ունենալով դոլարի մեծ դեֆիցիտ, ստիպված եղավ հրաժարվել ազգային արժույթները դոլարի կոնվերտացնելու գործընթացից:

Յամահյան կամ արժույթի զարգացման ժամանակակից փուլ

Ժամանակակից արժույթի համակարգը ձևավորվել է 1976թ., Յամահյան համաձայնագրի կնքման արդյունքում:

Յամահյան համակարգի հիմնական գծերն են.

- Ոսկու դեմոնետիզացիան (ապամետաղադրամացում)
- Ոսկու և դոլարի ստանդարտի փոխարինումը բազմարժութային համակարգով
- Ֆիքսված արժութային կուրսից անցումը լողացող կուրսի:

Բրեթոն-Վուդսի խորհրդաժողովը և գլոբալացման մարտահրավերները

ՀԲ-ն և ԱՄՀ-ն միասին հաճախ կոչվում են Բրեթոն-Վուդսի հաստատություններ: ՎԶՄԲ-ին հետագայում գումարվեցին Միջազգային ֆինանսական կորպորացիան (ՄՖԿ) և Միջազգային զարգացման ընկերակցությունը (ՄԶԸ): ՎԶՄԲ-ն վարկեր է տրամադրում անդամ պետություններին կամ կառավարության երաշխիքներ ունեցող ձեռնարկություններին որոշակի ծրագրերի համար: *ՄՖԿ-ն ռիսկային կապիտալ (venture capital) է տրամադրում մասնավոր ձեռնարկություններին՝ անկախ մարման երաշխիքից: ՄԶԸ-ն կոնցեսիոն վարկեր է տրամադրում ամենաաղքատ երկրներին:*

Ինչպես նշված է Համաշխարհային բանկի համաձայնագրի (*Articles of Agreement*) 1-ին հոդվածում, նրա նպատակներն են անդամ պետու-

թյունների վերակառուցումը և զարգացումը, վարկերի կամ մասնավոր ներդրողների՝ այլ ներդրումների համար երաշխավոր կանգնելու կամ դրանց մասնակցելու միջոցով օտարերկրյա մասնավոր ներդրումների խթանումը, միջազգային առևտրի երկարաժամկետ հավասարակշռված աճի և անդամ պետությունների վճարային հաշվեկշիռներում հավասարակշռության պահպանման խթանումը՝ այդպիսով աջակցելով նրանց տարածքներում արտադրողականության, կենսամակարդակի աճին և աշխատանքի պայմանների բարելավմանը, իր քաղաքականության այնպիսի կարգավորումը, որը հնարավորություն է տալիս առաջնահերթությունը վերապահել առավել օգտակար և անհետաձգելի նախագծերին (ՎԶՄԲ համաձայնագիրն առաջին անգամ հրապարակվել է «2UNTS 134»-ում և հասանելի է http//:www.worldbank.org հասցեում):

Միջազգային արժութային համակարգի հիմնական նպատակը, ինչպես նախատեսված է ԱՄՀ համաձայնագրում, այնպիսի համակարգի (*framework*) ապահովումն է, որը կնպաստի ապրանքների, ծառայությունների և կապիտալի փոխանակմանը պետությունների միջև: Ավելին, 1-ին հոդվածում նշվում է, որ ԱՄՀ-ն պետք է իր անդամներին վստահություն ներշնչի՝ Հիմնադրամի ընդհանուր միջոցները նրանց համար *ժամանակավորապես հասանելի դարձնելու միջոցով:*

Հենց սա է գլխավոր իմաստը՝ աշխարհը դրդել դեպի գլոբալիզացիա:

Սակայն գլոբալացման դրական կողմերի հետ մեկտեղ արժե նշել նաև այն հիմնախնդիրները, որոնք ծնում է այն:

Գլոբալացում հասկացությունը լայնորեն շրջանառության մեջ է դրվել 20-րդ դարի 80-ական թթ., ըստ Ի.Բարտելսոնի ձևակերպման՝ թեև ոչ մեկին հասկանալի չէ գլոբալացումը, սակայն ոչ ոք չի կասկածում նրա գոյությանը:

Գլոբալացման հիմնական գործոններն են՝

- Գիտության և տեխնիկայի զարգացումը
- Տնտեսական աշխարհակարգի զարգացումը
- Համաշխարհային և տեղական քաղաքակրթությունների տարածումը
- Հասարակության անցումը «ագրարային-ինդուստրիալ-հետինդուստրիալ կամ ավանդական-մոդեռն-հետմոդեռն» փուլերով,

որոնցից յուրաքանչյուրը կարելի է դիտել որպես գլոբալացման առանձին փուլ:

Ըստ առկա սահմանումներից մեկի՝ *«Գլոբալացումը բազմագործոն, սիներգետիկ երևույթ է, որը ձգտում է ստեղծել գլոբալ տնտեսական, ֆինանսական, կոմունիկացիոն և տեղեկատվական ցանցեր, որոնք, տարածվելով ողջ աշխարհով, ձգտում են համաշխարհային քաղաքակրթությունը ներառել մեկ միասնական ամբողջական համակարգի մեջ»:*

Գլոբալացման երեք փուլ կամ ալիք է առանձնացվում.

1. 19-րդ դարի վերջից մինչև 20-րդ դարի սկիզբը, երբ առևտրային և կապիտալ ներդրումները տարածվեցին աշխարհի մեծ մասում: Երկու համաշխարհային պատերազմները կանխեցին դրանց ընթացքը:
2. 20-րդ դարի 70-90-ական թթ., որի նախադրյալները դարձան հեղափոխությունը տեղեկատվության և հեռուստատեսության ոլորտում:
3. Ժամանակակից փուլ, որը, սկսվելով նախորդ դարի 90-ական թվականներից, շարունակվում է մինչև այսօր: Այս փուլի նախադրյալները դարձան.

- ԽՍՀՄ և առհասարակ սոցիալիստական ճամբարի կործանումը, որն ապահովեց շուկայական տնտեսության փոխարինումը պլանային տնտեսությամբ:
- Տեղեկատվական հեղափոխության ծավալումը, որի արդյունքում ձևավորվեցին էլեկտրոնային տնտեսությունը, էլեկտրոնային ֆինանսական կառուցվածքները, էլեկտրոնային փողը: Այդ ամենը թուլացրեց ազգային պետությունների դերն ու նշանակությունը:
- Մոդեռնի նախագծի և լուսավորականության իդեալների կործանումը, որի ընդհանրական սկզբունքներն էին ռացիոնալիզմը, առաջադիմությունը, գիտական տեխնոլոգիզմը:

Գլոբալացման ներկա գործընթացների արդյունքում լրջորեն թուլանում է պետության դերը, որի արդյունքն են բազմաթիվ զինված հակամարտությունները:

Զինված հակամարտությունները լրջորեն աղճատել են վերջին տասնամյակը և հավանաբար կշարունակվեն, եթե լուծում չստանան

դրանք ծնող խորքային պատճառները, որոնք բազմաթիվ են և տարբեր, սակայն երկու գործոն առանձնանում են որպես կարևոր: Առաջինը պետության դերի թուլացումն է, երկրորդն այն է, որ գլոբալացումը հնարավորություն է ստեղծել «կոնֆլիկտածին ձեռներեցների» համար: Գլոբալացվող աշխարհի ամենանվազ հաջողակ մասում հասարակությունները մեծ մասամբ անապահով են: Երբ հենց կառավարությունը չի բավարարում չափանիշները և գործում է անպատասխանատու կերպով, երբ պետություններն այլևս անկարող են ապրանքներ մատակարարել, իսկ մարդիկ անապահով են, կոնֆլիկտածին ձեռներեցները ցեղախմբային ինքնությունների, էթնիկական, կրոնական պատկանելության հիման վրա հավաքագրում են մարդկանց, ինչի հետևանքն են լինում զինված հակամարտությունները:

Գլոբալացման այս դարաշրջանում գլխավոր հարցերից մեկն այն է, թե ինչպես բաշխել իշխանությունն ապագայում: Ինչպիսին կլինի պետության, մասնավոր հատվածի, քաղաքացիական հասարակության և միջկառավարական համակարգի ամենաէական դերը: Գնում ենք դեպի ինչոր համաշխարհային կառավարում: Եթե այդպես է, ինչպիսին կլինի դրա կառուցվածքային և իշխանական ընդգրկումը: Արդյո՞ք դա մի ապակենտրոնացված «կոսմոպոլիտ» համաշխարհային կառավարում կլինի՝ իշխանության բազմաթիվ շերտերով, կազմված իշխանության նոր ձևավորվող բազմապիսի և միմյանց խաչվող ցանցերից, որոնք կներառեն սոցիալական ապահովության, մշակութային և քաղաքացիական միությունները:

Կարևորը գործընթացն է, և գործընթացն է, որ ձևավորում է վերջնական արդյունք: Երբեք չի կարելի թույլ տալ, որ ապագա ուտոպիստների հանգստացնող նախագծումը փոխարինի այն աշխատանքին, որը պետք է կատարվի այսօր և վաղը՝ լուծելու ներկայում խոցելի վիճակում գտնվողների խնդիրները: Նրանք համարժեք արձագանքի կարիքն ունեն այսօր, ոչ թե անորոշ խոստում այն մասին, որ իրավիճակը կբարելավվի հաջորդ սերնդի օրոք կամ դրանից հետո՝ երկրորդ կամ երրորդ սերունդների ժամանակ:

Հուշագիր հեղինակին

«Գլոբուս» վերլուծական հանդեսը հրապարակում է վերլուծական բնույթի հոդվածներ՝ նվիրված Հայաստանի և Հայության ռազմաքաղաքական, տեղեկատվական և վերջինիս մեջ ընդգրկված քաղաքակրթական ու հոգևոր անվտանգության խնդիրներին, հայկական համայնքների և տարալեզու-տարադավան հայերի կազմակերպչական անվտանգության հիմնահարցերին:

«Գլոբուս» ամսագրի խմբագրական խորհրդի կողմից *պատվիրված* նյութերը հանդիսանում են «Նորավանք» ԳԿՀ-ի սեփականությունը: Ձեռագրերը գրախոսվում են: «Գլոբուս» հանդեսի հրապարակումները արտահայտում են հեղինակների տեսակետները:

Հոդվածների ներկայացման ձևը

1. Հոդվածները ներկայացվում են տպագիր և համակարգչային շարվածքով (*MS WORD* ծրագրով), «*Sylfaen»* տառատեսակով, 11 տառաչափով (ֆոնտով), ծավալը չպետք է գերազանցի 7 էջը:
2. Առաջին անգամ հոդված ներկայացնելիս պարտադիր կցել հեղինակի ինքնակենսագրությունը *(CV)*:
3. Էջը պետք է համապատասխանի A4 չափին, լուսանցքները ձախից, աջից, վերևից ու ներքևից՝ 2 սմ: Տողերի միջև հեռավորությունը՝ 1.5:
4. Ինտերնետային աղբյուրների հղումները նշել տողատակում:

Խմբագրություն

«ԳԼՈԲՈՒՍ» ամսագիր
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ globus@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 18.12.2017թ.
Թիվ 10 (89), 2017թ.
Տպաքանակը՝ 150։

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70x100 1/16
Պայմանական 4 մամուլ։ Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «Հայկարլի» ՍՊԸ տպարանում